

ԱՂՈՉՎԳԻՐՔ

МОЛИТВЕННИК





ՀՐԱՄԱՆԻ

**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ**

ՍՈՐԱԶԱՎՈՅՑ ԵՒ ՎԵՐԱՓԱՌ  
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ


По благословению

Его Святейшества ГАРЕГИНА II

Верховного Патриарха и  
Католикоса Всех Армян

ԱՌԱՋՎԱՐՈՔ

ԽՈԼՈՎԵՏԸՆՆԻԿ



ՄԱՅՐ ԱԹՈՈ-ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՅՑՆԻ ՀՐԱՄԱՎՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՅՑՆ - 2009 - ՏՎ. ԷՇՄԻԱԴՅԻՆ

ՀՏԴ 23/28  
ԳՄԴ 86.37  
Ա 490

Ա - 490 Աղոթագիր/Մոլիտվենիք: Մայր Աթոռ Սուլը Եջմիածին: - Ս. Եջմիածին, 2009, 214 էջ:

Գրքում ամփոփված են Ս. Գրիգոր Նարեկացու Աղոթամատյանից հատվածներ՝ արդի հայերեն և ռուսերեն լեզուներով:

Նախատեսված է ամենօրյա աղոթքների համար:

ԳՄԴ 86.37

Ներկայացված է հրապարակության  
ՄԱՅՐ ԱԹՈՐ ՍՈՒԼԲ ԷջՄԻԱԾԻՒ  
ՎԱՐՆՈՐԵՒՑ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Տպագրվում է մեկնասուրյամբ  
**Արմեն Տեր-Վարդանյանի**

Спонсор издания  
**Արmen Տer-Վարդանյան**

ISBN 978-9939-59-034-9  
© Մայր Աթոռ Սուլը Եջմիածին, 2009 թ.

## Երկու խոսք

Ս. Գրիգոր Նարեկացու ամնահ Մատյանից քաղված այս մի քանի գլուխները մի նպատակ ունեն, այն է՝ օգտագործել Նարեկամատյանի այդ հատվածները որպես մեր **ամենօրյա աղոթքներ**: Փորձության պահին, հիվանդության ժամանակ, զանազան դիպվածների դեպքում փորձեք ձեր աղոթքները ուղղել մեր Երկնավոր Յորը՝ Ս. Գրիգոր Նարեկացու խոսքերով և ոգով: Այս սկզբունքով են աղոթել մեր նախնիները արդեն հազար տարուց ավելի: Եվ կիամոզվեք, որ Նարեկամատյանը այսօր էլ կենդանի է, զորավոր է և կարող է արտահայտել մեր սրտի ամենախորունկ ծալքերի վիճակն անգամ, մի անգամ ևս կիամոզվեք, որ Ս. Նարեկացու աղոթքները անմահ են և ժամանակի մեջ չեն կորցրել իրենց կարևորությունն ու զորությունը: Աղոթելուց հետո դարձյալ ու դարձյալ կիաստատեք այն փաստը, որ Նարեկամատյանը **նոր պատգամ է ամեն եկող օրվա համար**:

Աղոթքները ընտրված են ըստ բովանդակության: Յայերեն տեքստերը վերցված են Ս. Խերանյանի (Երևան, 2003), իսկ ռուսերենը՝ Ս. Դարբինյան-Սելիբրյանի և Լ. Խանլարյանի (Դ. Նարեկացի, Կհից սկօրենիք. Մ., 1988) թարգմանություններից:

## Глава 84

## Слово к Богу из глубин сердца

**Ч**арв Небесный, Венценосец Всеобщий,  
 Владыка всех [сущих], Упование всеобщее,  
 Создатель видимых, Творец небожителей,  
 Источник сотворения, Устроитель грядущего,  
 Света Дафитель и утра Причина,  
 Подготовитель завтрашнего дня, Проявитель  
 вечера,  
 Производитель мрака, искуснейший Мастер,  
 Начало мудрости, Очиститель  
 благословенный,  
 Плавильщик грехов, Гонитель недугов,  
 Разрушитель горечи, Хранилище покоя,  
 Изобретатель грез, Распорядитель сна,  
 Извечный Порядок дыхания, Долговременность  
 чувств,  
 Дафитель упокоения, Рассеиватель бредней,  
 Преобразитель мечты, Переизменчивость ужаса,  
 Смена печали, Предотвратитель резкой боли,  
 Разрушитель сомнений, Успокоитель волнения,  
 Устрашение коварства, Кафатель злых сил,  
 Гонитель скверны, Душитель соблазнов.  
 Оборони сотворившего небо дланью Свою,  
 Утверди возведенной десницей Своей,  
 Обними вседержащими руками Своими,  
 Укрой Божественным покровом Своим,  
 Укрепи попечением всеобщим Своим,  
 Окружи, огради сномом бессмертных,

ԲԱՆ ԶԴ

ՄՐՑԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈԽԱՔ ԱԱԾՈՒ ՀԵՏ

**Ե**րկնավո՛ր արքա, բարձրյալ թագավոր,  
 Տե՛ր դու բոլորի և ամենքի հույս,  
 Արարիչ տեսանելիների և հոգեղենների հաստիչ,  
 Պատճառ եղածների և կազմող լինելիների,  
 Տվիչ լույսի, առիթ առավոտի, պատրաստիչ  
 վաղվա,  
 Երևացնո՞ղ երեկոյի, հորինող խավարի,  
 Արվեստավոր բարեհնար, իմաստության գործիչ,  
 Քավարան օրհնյալ, հալիչ մեղքերի, հալածիչ  
 ցավերի,  
 Լուծիչ դառնության, պահպանարան հանգստի,  
 Հնարիչ նիրհի, կարգավորիչ քնի, պարգևիչ նինջի,  
 Կարգավորիչ շնչառության, զգայության  
 տեղություն,  
 Ցրիչ ցնորքների, բարեկարգիչ անուրջների,  
 Փոխարկող զարհուրանքի,  
 Փոփոխիչ տարություն, խափանիչ խայթումների,  
 Կասկածների փարատիչ, ծփանքների հանդարտիչ,  
 Ահարեկություն խարդախների, դևերի հարվածիչ,  
 Ախտերի փախուցիչ և ընկղմիչ  
 գայթակղությունների:  
 Պաշտպանի՛ր ձեռքովդ երկնաստեղծ,  
 Զորացրո՞ւ աջովդ բարձրացած,  
 Ամփոփի՛ր թևերովդ ամենակալ,  
 Ծածկի՛ր խնամքովդ աստվածային,  
 Ամրացրո՞ւ վերնայիններիդ վերակացությամբ,

Прикрой со всех сторон хороводом ангелов  
Своих;  
Изгони Ты противника моего воинством  
бдящих сил Твоих,  
Мольбами Матери Божьей поддержи меня,  
Назначь мне в охрану рать первенцев Твоих.  
Вместе с очами на лице открои также и  
мысленные очи мои,  
Вместе с дыханием моим встяхни и  
оцепенелость от тяжких грехов,  
Изыми, Господи, из чувств моих  
несмыслиность закоренелую,  
Разорви, Благодетель единственный, толщу  
покрова моего.  
Вместе с началом появления света Ты  
милосердие Свое прояви,  
Ты солнце праведности Твоей вместе с  
восходом солнца  
В смятенное сердце мое привнеси,  
Лучи Твоей славы факелом зажги в келье  
разума моего,  
Знамение Креста Твоего пусты  
распространится  
По всей душе и по телу моему.  
И ныне вручаю Тебе Тобой принофовленную  
Скинию мою с сохранившейся в ней душой  
моей.  
Ибо Ты - неисповедимый Бог,  
Щедрый ко всем и сущий во всем.  
Благословляемый присно. Аминь!

Շուրջանակի պարսպիր անմահներիդ  
գումարտակներով,  
Հնդդիմամարտին իմ վանիր զվարթուններիդ  
զինվորներով,  
Պատսպարի՛ր սասանյալիս Աստվածածնիդ  
մաղթանքներով,  
Անդրանիկներիդ բանակներն ինձ բարի  
պահապան կարգիր:  
Բաց արա աչքերիս հետ նաև տեսանելիքները  
մտքիս,  
Զգաստացրու չնչիս հետ նաև դանդաղությունը  
ծանրաբեռն իմ կրքերի,  
Վերացրու թանձրամած հիմարությունն իմ  
զգայարանքների, Տե՛ր,  
Վերցրու թանձրությունն իմ ծածկույթի, միա՛կ  
բարեգործ:  
Լույսը բացվելիս՝ ողորմությունդ էլ ծագիր ինձ  
վրա,  
Եվ արևի հետ՝ քո արդարության արեգակը թող  
մտնի սիրտս նեղ.  
Փառքիդ ճառագայթը մտքիս խորհրդարանում  
թող ջահապորվի.  
Եվ խաչակնքումը խաչիդ՝ մարմնիս և հոգուս  
մեջ թող տարածվի՛ համասվյուռուս:  
Քեզ եմ հանձնում այսօր քո հորինած տաղավարը՝  
Այստեղ բնակվող պահապան հոգուս հետ միասին,  
Զի դու ես Աստված անքնին,  
Ամենակարողդ ամենքի համար և ամեն բանում  
բովանդակապես,  
Օրհնյա՛լ հավիտյանս. ամեն:

## Глава 91

### Слово к Богу из глубин сердца

1

**Г**осподь, Господь милосердия и Бог  
утешения,  
Имя высокое, Глас страшный,  
Призыв сурговый, Весть недоступная,  
Слово отпущения, Восклицание восторга,  
Благодатное ободрение всесострадающего  
благоволения,  
Страшась Коего трепещут все твари сующие;  
Боясь гнева Твоего, порхают серафимы,  
Прикрываются крылами херувимы,  
Закрывают [лица] сонмы светоподобных,  
Робеют, дивясь, все царства вышиние;  
И в великом трепете все они веселятся  
В едином празднестве ликования.  
Охвачены ужасом бесы, полчища зла отражены,  
Исчезают любящие тьму души,  
Низвергаются в бездну посланцы сатаны.  
Знаком Креста пресечены нападения  
противника,  
Запертые мстительные амаликитяне в тюрьме  
преисподней,  
Узлом, который не распутать,  
Связаны орудья супостата,  
Заключены в темницу, из коей нет избавления,  
Скотища, снаряженные смертоносным  
оружием,

**Ա**նուն մեծատառ, ձայն աչեղալուր, կոչումն  
ահավոր,  
Համբավ անպարփակ, բարբառ սոսկալի,  
Հնչումն հիասքանչ,  
Հուսափություն բարերար, ամենողորմ  
քաղցրություն.  
Որից վախեցած սասանվում են ողջ արարածները:  
Ահիդ պակուցիչ սպառնալիքից  
Սափառնում են սերովբեները, ու քերովբեները  
թևամփոփփում,  
Պարուրվում են պարերը լուսակերպների,  
Երկնային բոլոր պետությունները երկնչում  
հիազարհուր,  
Ու ցնծում են ողջ երկյուղած գողով՝  
նավակատիքի բերկությամբ:  
Զարհուրում դեկերն ու, ընկրկում են գնդերը չարի,  
Զքփում ոգիները խափարասեր,  
Անդունդ գլորվում հրեշտակներն օտարի,  
Խաչի նշանով խարխափում են հարձակումները  
ընդդիմամարտի,  
Փակվում են քինոտ ամաղեկացիք բանտի  
խորքերում,  
Անլուծանելի հանգուցումներով պաշարվում  
խմբերն հակառակորդի,

По грозному велению Твоему заперты в  
узилище толпы бесов,  
Онемев, умолкли сообщество прекословиящих,  
Погибелью снедающей охвачены сонмы [злы] х  
духов,  
Нефасторгаемыми цепями скованы апостолы  
лжехриста.

## 2

Вот [начертанное] перстами руки моей  
Знамение Креста Твоего, о Всевидящий,  
Возношу в час ночной я к Тебе,  
Ибо Ты не помрачашься тъмою неведения,  
Но обитаешь, покоясь, в свете непривступном.  
Прими под тень крыл Твоих, о Всемогущий,  
Меня, с благодафением молящего,  
Коему угрожает опасность,  
Спаси от вторжения смущающих меня  
призраков,  
Очисти чувство видения очей сердца моего,  
Укрепи Древом Жизни Твоим против  
сновидений мрачных,  
Окропи Кровью Своей окрест жилища моего,  
Означь капелью из животворного ребра Твоего  
Стезю выхода и входа моего,  
Четырехкрыльй Твой [Крест] да будет  
хранителем кровли моей,  
Пред взором моих очей, возведенных горе,  
Да предстанет [знак] таинства спасительных  
Твоих Страстей.

Մահապենների գումարտակները  
արգելափակվում զնդանում անզերծ,  
Դևերը պրկվում ահեղ հրամանիդ մետաղների մեջ՝  
Ընդդիմախոսներն ամենայն լուսում,  
պապանձվում անձայն,  
Աներևույթների բազմությունները  
պարափանդվում են կորստյան հյուծմամբ,  
Ու նեղվում անլույժ շղթաների մեջ  
առաքելությունք սուտ-քրիստոսների:

## 3

Մթին գիշերվա այս ժամին ահա ձեռքիս մատներով  
Նշանիդ տյառնագրությունը քեզ եմ կարկառում.  
Քեզ, որ ոչ միայն չես մթնում անդիտության  
խավարով, ո՛վ ամենատես,  
Այլև անմատույց լուսի մեջ ես բնակվում ու  
հանգստանում:  
Աղաչում եմ քեզ գոհաբանությամբ, ընդունի՛ր  
դու ինձ,  
Ա՛ռ վշտահարիս հզոր թևերիդ պաշտպանության  
տակ,  
Փրկի՛ր դրսից եկող պղտոր ցնորքներից,  
Մաքրի՛ր սրտիս աչքերի տեսողության  
զգայարանքը դու,  
Կենաց փայտովդ ինձ ամրապնդիր տիսուր  
անուրջների դեմ,  
Արյունովդ սրսկիր բնակարանիս շուրջ-բոլորը,  
Կողքիդ կենարար արյան կաթիլով գծագրիր  
ճամփան իմ ելումուտի,

Да будет установлено у дверей дома моего  
Орудие мук Твоих;  
Да будет висеть упование [полная] вера моя  
На древе благословения Твоего;  
Останови, о Господи, с его [помощью]  
губителя душ,  
И да войдет без помех защитник света;  
Вместе со страшной тяжестью скорби моей  
Облегчи и бремя моих долгов,  
Дабы и я на ложе своем,  
Собравшись с мыслями в тишине  
И вспомнив горькие плоды отчаяния,  
Исповедался пред Тобой, всеведущим,  
О несчетном множестве неправедных, мерзких  
моих деяний.

### 3

Успокой меня, труждающегося, от  
многобурных моих страданий,  
Рассей мучительные сомнения погибающей  
души,  
Горести и заботы, скорбь и стенания,  
Душевные страдания и несчастья,  
Вздохи и надломленность [души],  
Сокрушенностъ сердца и исступление,  
Оцепенение и содрогания,  
Опьянение и безумие,  
Недомыслие и глупости,  
Охлаждение любви и палящий жар  
сладострастия.

Քառաթեիդ ձեակերպումը թող պահպանարան  
լինի երդիկիս,  
Ու խորհրդանիչն ամենափրկիչքոտանջանքների,  
թող որ գեղի վեր նայող աչքերիս հանդեպ լինի  
միշտ,  
Զարչարանքներիդ գործիքը թող իմ տան դռան  
ճակատին դրոշմվի,  
Հավատքն իմ հույսի թող որ օրհնության ծառից  
կախվի քո:  
Կաշկանդի՛ր դու, Տե՛ր, այդ նշանովդ հոգիների  
սատակչին,  
Եվ թող ներս մտնի առանց արգելքի պաշտպանը  
լույսի,  
Յավերիս սաստիկ ծանրության հետ մեղքերիս  
բեռն էլ թեթևացրու.  
Մահճում, մտամփոփ լուարանիս մեջ,  
Մտաբերելով հուսահատության պտուղները  
դառնահամ,  
Խոստովանում եմ ամենագետիդ բոլոր անօրեն  
գործերը իմ չար:

### 4

Հանգստացրո՛ւ վաստակյալիս իմ բազմածուփ  
աշխատանքից,  
Կործանված ոգուս տարակույսների տագնապը  
ցրի՛ր,  
Դառնությունը վշտերի հետ և հեծությունը  
ցավերի հետ,  
Անձկությունը թշվառությունների հետ,

Окажи помощь мне, немощному,  
 многопечальному и малодушному,  
 Твоей десницей, творящей благодеяния,  
 Твоей дланью обновляющей и перстами,  
 дающими жизнь.  
 Твоей славой, всегда сияющей, и вечностью  
 нетленного,  
 Твоим светлым лицом и существом Твоего  
 бытия обожаемого,  
 Твоей высотой, достойною поклонения.  
 Утиши горестные мои рыдания, кои душат и  
 губят меня,  
 [Пресеки] новые ухищрения зла,  
 Старые козни искусителя,  
 Дурные побуждения, [внушаемые] тем, кто к  
 смерти толкает,  
 Непристойные видения нечестивца  
 неизменного,  
 Обольщающие обманы злобного дьявола,  
 Ласкающее, жаркое дыхание притягивающего  
 колдуна.  
 Предохрани меня в этом месте отдохна и  
 успокоения, подобного смерти,  
 От пустых мыслей и новых ошибок,  
 Величайших грехов и малейших преткновений,  
 От обманщика злого и мерзкого.  
 Удали неподобающие мысли и чувства от  
 меня, раба грешного,  
 Страсты предосудительные, поведение,  
 достойное осуждения,

Հառաջանքները խորտակումների հետ,  
 Սրտաբեկությունը ապշությունների հետ,  
 Թմրությունը շվարման հետ,  
 Արբեցությունը հիմարությունների հետ,  
 Սառելը սիրո և հրաբորբոք զերմությունը  
 ցոփցանկական ախտի հետ,  
 Օժանդակ եղիր՝ ամենատխուր տարտամությամբ  
 տկարացածիս.  
 Բարեգործ աշով քո չնորհատու, ձեռքովդ  
 նորոգող, մատովդ կենսաբաշխ,  
 Մշտափայլ փառքովդ, անեղծ մշտակայությամբդ,  
 երեսովդ զվարթ,  
 Պաշտելի էիդ իսկությամբ և բարձրությամբ  
 երկրպագելի  
 Կտրի՛ր խեղդվողիս վշտալից հեծեծանքները,  
 Զարի հնարքը նոր և բանսարկուի  
 խարդավանքը հին,  
 Օտար դրդումներն ի մահ մղողի,  
 Անպատճաճ դեպքերն ամենօրյա եղեռնագործի,  
 Աչքակապ ճարպկությունները դաժան դկի,  
 Փաղաքչական բոցաշնչությունը գրավող  
 կախարդի:  
 Պահպանի՛ր դու ինձ այս մահահանգույն  
 հանգստյան վայրում՝  
 Թաքուն մտքերից, մասնավոր սխալանքներից,  
 Մեծագույն մոլորանքներից, փոքրագույն  
 սայթաքումներից  
 եվ չար խաբումիկ ձանձրություններից:  
 Հեռացրո՛ւ հանցավոր ծառայիս զգայություններից

*Приключения постыдные, следы ложные,  
Мечты смехотворные, помыслы ничтожные,  
Многословие, заслуживающее презрения.*

#### 4

*Вооружи меня, на Тебя уповающего,  
Душою, не ведающей заблуждений,  
И телом неоскверненным,  
Дабы противостояли они дыханию ветра,  
ударам волн,  
Буйству грозы, бурным вихрям и нападениям  
зверей.  
Когда я закрою глаза, да не помрачится зрение  
сердца моего,  
Но пусть станет оно неусыпным, ясным и  
спокойным  
И засияет с Тобой, о Господь Иисус Христос,  
в светлом горении негасимом.  
Очисти словом Твоим полог постели моей  
От обмана, забот и воспоминаний, Тебе  
ненавистных,  
Мыслей, Небу противных, и безумия  
богохульного,  
Неблагодарности изменяющего Господу своему  
И Богопротивной ереси.  
Будь попечителем мне полками Твоими  
небесными,  
Властью и могуществом,  
Непобедимой силой непорочных служителей*

*Խորհուրդներ անդեպ, կրքեր բասրելի, վարք  
անարգելի,  
Դեպքեր անպատկառ, վրիպելի հետքեր,  
պատրանքներ ծաղրելի,  
Խոհեր անգոսնելի և ավելորդաբանություններ  
արհամարհելի:*

**Դ**

*Քեզ ապավինածիս զինի՛ր անսխալ հոգով և  
մաքուր մարմնով  
Հողմերի շնչից, բուռն հարվածներից,  
Փոթորիկների բախումից, մըրկիկների պութկումից  
Եվ գաղանների հարվածներից զերծ մնալու  
համար:  
Երբ փակեմ աչքերս՝ սրտիս նայվածքը թող  
չստվերանա,  
Այլ զվարթանա, պայծառանա ու վայելչանա,  
Փայլի թող քեզ հետ, Տեր Հիսուս Քրիստոս,  
լուսավոր փառմամբ անշիջաննելի:  
Խոսքով մաքրիր իմ ննջատեղին՝  
Խորամանկություններից, երկյուղներից,  
Քեզ ատելի հիշողություններից,  
Աստվածամարտ մտածումներից,  
Հանցավոր խենթություններից,  
Տիրանենդ անշնորհքություններից  
Եվ աստվածընդդեմ պառակտումներից:  
Խնամակալ լինես ինձ երկնային քո գնդերով,  
պետություններով  
Եվ իշխանություններով զորավոր ու անհաղթելի,*

Святой Божественности Твоей.  
 [Да помогут мне] апостолы  
     благовестованием Евангелия,  
 Пророки - заветами [своими],  
 Блаженные - молитвами, вознесенными в день  
     кончины.  
 Тогда упокоюсь я в страхе, печалясь ради Тебя,  
 И благодатию Твоей пробужусь с удвоенной  
     радостью;  
 Коли в отчаянии усну, то да воскресну я снова  
     в духовной радости;  
 Коли же я лягу спать во грехах, то снова  
     восстану,  
 Отделенный от угрызений совести  
     непобедимою непорочностью.

## 5

Так услышь, о всеблагий, ходатайством  
     Святой Богородицы Твоей,  
 Всех праведников и мучеников избранных,  
 Мои многоскорбные и стенающие моления.  
 Тебе слава от всех, воплем моим возносимая  
     ввысь,  
 Вместе с сонмом бессмертных сил бдящих  
     святых  
 Во хвалу Отицу Твоему - Богу нашему,  
 И Духу Святому Твоему, созидателю и  
     обновителю всего,  
 Во веки вечные. Аминь!

Որոնք մաքուր մատակարարներ են սուրբ  
     Աստվածությանդ.  
 Առաքյալներն՝ ավետյաց ավետարանով,  
 Մարգարեններն իրենց կտակարաններով,  
 Եվ վերջին օրը երջանիկների քեզ ընծայվող  
     մաղթանքներով:  
 Այնժամ երկյուղով և քեզ հաճելի տրտմությամբ  
     ես պիտի նիրհեմ  
 Եվ քո շնորհիկ բուռն ուրախությամբ  
     արթնանամ կրկին:  
 Եթե վհատությամբ ննջեմ նույնիսկ,  
 Հոգեոր բերկրությամբ պիտի հարություն  
     առնեմ դարձյալ,  
 Եթե մինչեւ իսկ մեղքով ընկողմանեմ,  
 Պիտի կանգնեմ կրկին՝ մաքուր խղճով և անաղտ  
     անբծությամբ:

## Ե

Լսի՛ր խնդրանքներն իմ հառաչալից և  
     հեծեծագին, միա՛կ բարեգութ,  
 Բարեխոսությամբ սուրբ Աստվածածնիդ  
 Եվ արդարների բոլոր ու ընտրյալ նահատակների:  
 Բոլոր կողմերից, քո բարձունքն ի վեր, իմ  
     ձայնով փառք եմ առաքում ես քեզ,  
 Միշտ սուրբ և անմահ զվարթունների միջոցով՝  
 Ի գովեստ քո Հոր և մեր Աստծո,  
 Եվ ամեն ինչի ստեղծիչ և նորոգող Սուրբ Հոգուդ,  
 Հավիտյանս հավիտենից. ամեն:

## Глава 71

### Слово к Богу из глубин сердца

1

*Ч*тоелику блаженны и прославленны сонмы  
святых,  
Некоторые из коих подчас спотыкались, но  
чаще [крепче того] утверждались,  
[Сперва] они колебались слегка, но  
просветились,  
Освещенные ярким сиянием Духа Святого;  
Содержанием своим одно [явление] указует на  
свойственную всем слабость плоти,  
Другое же - на превосходящий закон природы,  
образ жизни и добродетели ангелов.  
И днесь благословенны всесильными устами  
Божими Христова Отца  
Они, избранные, прославленные, воскуряемые  
и восхваляемые, как члены [воинства]  
Христова обожаемые  
И украшенные, как обитель Духа Святого; в  
них ни следа, ни уловок трака  
И лишь искренность совершенная, и  
праведность светлая, и сходство с Богом,  
(Насколько возможно человеку Божиему быть  
похожим на Бога!).  
Лица простые и ясные, нрав возвышенный и  
непреклонный,  
Жизнь воздержная, безупречная, поклонение  
Богу - твердое, нерушимое,

ԲԱՆ ՀԱ  
ՄՐՑԻ ԽՈՐՔԵՐԵՑ ԽՈԱՔ ԱԱԾՈՒ ՀԵՑ

Ա  
Երջանիկ և փառավորյալ են սրբերի դասերը,  
Որոնցից ոմանք դույզն-ինչ գայթեցին թեև,  
բայց ավելի հաճախ հաստատվեցին  
Սասանեցին փոքր-ինչ, բայց վառված՝ հոգու  
շողերով պայծառ  
Մաքրությամբ դարձյալ լուսավորվեցին:  
Մեկը ցույց է տալիս նրանց խառնվածքի  
տկարությունն հասարակաստեղծ,  
իսկ մյուսը՝ բնության օրենքին հաղթող վարքն  
առաքինի, հրեշտակային:  
Ուստի և նրանք օրհնված են Քրիստոսի Հոր  
ամենիշխան և աստվածային բերանով,  
եվ ընտրյալներ են հոչակված, խնկված ու  
բարեբանված,  
Պաշտված են իրեւ անդամներ Քրիստոսի,  
եվ իրեւ Սուլրը Հոգու օթևաններ են  
պատրաստված.  
Չունեն իրենց մեջ խավարի նշմարներ կամ  
հետքեր անդամ,  
Այլ անկեղծություն են ամբողջովին և լուսավոր  
արդարություն՝  
եվ որքան հնարավոր է Աստծո մարդուն  
Աստծուն նմանեցնել,  
Պարզերես են նրանք և վարքով, բարձր ու  
անխոնարհելի,

Поступь смелая, неукротимая, правда - единая  
и неизменная,  
Отвага большая, несокрушимая, вид внешний -  
сияющий и безмятежный,  
Мудрость - вишняя непревзойденная, образ  
чистый, неоскверненный,  
Сам Бог поучал нас умолять Его  
От лица и в память имени их.  
Слово Твое, о Создатель, объяснило [нам],  
Как через них обретать благоволение в гневе.

## 2

А я - негодный во всем  
И, сколь можно выразить в словах, достойный  
хулы.  
Ибо, когда бодрствую, - я дремлю,  
Когда бодрым кажусь - цепенею,  
В благочестии своем обольщаюсь,  
А когда молюсь - заблуждаюсь,  
Двигаясь, я мешкаю,  
А оправдываюсь - согрешаю,  
Успокаиваясь, я возмущаюсь,  
Не собравшись в поход,  
Склонен я отступить.  
Отправляясь [в путь] - пячуясь я назад,  
С долей света соединяю трак,  
Со вкусом сладкого мешаю полынь,  
В крученую [нить] добра я вплетаю и зло,  
Только [на ноги] встаю, - я падаю вновь.  
Цвету я, но не плодоношу,

Նրանց կյանքն զգաստ է և անըստգյուտ,  
Աստվածպաշտությունն ամուր, անհեղելի,  
Հնթացքն արիական և անկասելի,  
Ճշմարտությունը միատարր և անցնդելի,  
Դիմագրավությունը գորեղ և անհաղթելի,  
Տեսողությունը պայծառ և անապշելի  
Իմաստասիրությունը երկնային և անկոխելի,  
Պատկերը մաքուր և անաղարտելի:  
Նրանց անուններն հիշատակել և աղոթքը հայցել՝  
Աստված ինքն էր, որ մեզ սովորեցրեց:

## 3

Իսկ ես անպետք եմ ամեն ինչի մեջ,  
Եվ պարսակելի, որքան հնար է ասել խոսքերով,  
Նիրհում եմ՝ մինչդեռ արթուն եմ,  
Թմրում եմ՝ մինչդեռ զգաստ եմ երեսում,  
Բարեպաշտությանս մեջ գայթակղվում եմ,  
Եվ վրիպում՝ մինչդեռ աղոթում եմ,  
Հնթանալիս՝ հանկարծ կանգ եմ առնում,  
Հազիկ արդարացած՝ մեղանչում եմ,  
Ու գեռ նոր խաղաղված՝ վրդովկում դարձյալ,  
Մինչդեռ արշավում եմ առաջ՝ դեպի ետ եմ  
Հակամիտում,  
Ու քայլելիս՝ կրունկիս վրա դառնում եմ ետ,  
Լույսի հետ՝ մի մաս խավար եմ կցում,  
Օշինդր եմ խառնում քաղցր համի հետ,  
Բարիքների կուղի հետ և՝ չարիքներ եմ հյուսում,  
Հազիկ կանգնած՝ կրկին գլորվում եմ,  
Ծաղկում եմ ու չեմ տալիս պտուղ,

Говорю [всегда], но не делаю,  
 Обещаю, но не исполняю,  
 Обет даю, но не расплачиваюсь,  
 [Руку] простираю и тут же отдергиваю,  
 Показываю, но не отдаю,  
 Приближаю, но не посвящаю.  
 [Едва] исцелившись от ран, получаю [новые].  
 Когда успокаивают меня, я снова волнуюсь,  
 Без права [на то] выступаю [в суде],  
 И по справедливости осуждают меня.  
 [Только] запишут меня [в книгу жизни],  
 Как тотчас [опять] вычекиваю.  
 Веду корабль я, но уклоняюсь с [верного] пути.  
 Начинаю, но к отдохновению не прихожу,  
 [Лишь] приду я в себя - и вновь потрясен,  
 Переополняюсь - и снова пустой,  
 Продолжаю я здесь [благо творить] -  
 А там [опять] скатываюсь вниз,  
 [Здесь] коплю - а там сжигаю.  
 Закладываю основу, но не довершаю,  
 Мало тружусь, много трачу,  
 Малую толику сокровищ коплю -  
 Бесчисленное [множество] их истребляю.  
 Других поучаю - сам неискушен,  
 Всегда я учусь - никогда не дохожу  
 До познания истины.  
 Угасшее зло я вновь воспламеняю,  
 Чуть приободрюсь - сильней изнемогаю,  
 Напрягаюсь - и тут же вновь расслабляюсь,  
 Здесь я латано - там [на части] рву,

Ասում եմ ու չեմ գործադրում,  
 Խոստանում եմ ու չեմ կատարում,  
 Ուխտում եմ ու չեմ վճարում,  
 Կարկառում եմ ձեռքս ու ետ քաշում դարձյալ,  
 Ցույց եմ տալիս ու չեմ ընծայում,  
 Մոտեցնում եմ ու չեմ մատուցում:  
 Վերքս հազիվ թե դարձանած՝  
     վիրապորպում եմ նորից,  
 Հաշտեցնում եմ ու վերստին խռովում,  
 Դատի եմ դիմում հանիրավի՝ և իրավամբ  
     դատապարտվում,  
 Գրվում եմ և իսկույն ջնջվում,  
 Նավում եմ ու շեղվում գծից,  
 Սկսում եմ ու չեմ հասնում հանգստի:  
 Հաստատվում եմ և սասանվում դարձյալ,  
 Լցվում եմ ու կրկին թափվում,  
 Շարակարգվում այստեղ՝ և այնտեղ վար հոսում,  
 Բարդվում եմ ու տեղնուտեղ վառվում:  
 Հիմնարկում եմ ու չեմ հանում գլուխի,  
 Վաստակում եմ սակավ և վատնում եմ բյուր,  
 Դույզնինչ գանձում եմ ու սպառում անհաշիվ,  
 Խրատում եմ ուրիշներին, և ինքս անփորձ եմ,  
 Սովորում եմ միշտ և ծմբարիտ գիտության չեմ  
     հասնում երբեք:  
 Մարած չարիքները արծարծում եմ նույնչափ,  
 Քաջալերվում եմ փոքրինչ և առավելապես  
     հուսալքվում,  
 Լարվում եմ և իսկույն թուլանում,  
 Կարկառում եմ այս՝ և այն պատառոտում,

Вызываю крапиву и сажаю волчец,  
 Взмываю ввысь - сюда низвергают меня,  
 Влетаю голубем в гнездо - вылетаю оттуда  
     вороной,  
 Прихожу я почти белым - ухожу совершенно  
     черным,  
 Говорю, что верую в Тебя, - отдаю себя [в  
     руки] убийце,  
 Едва предстал пред Тобою,  
 Как опять обернулся спиною.

### 3

Очищаюсь - и снова замаран я,  
 Могусь - и вновь оскверняюсь,  
 Уподобляюсь внешне Давиду я - и Саула дела  
     совершаю,  
 Устами правдивый - лгу утробой своей.  
 Правой [рукой] припасаю - левой [щедро]  
     раздаю.  
 Возделывая [ниву] под пшеницу, - засеваю [ее]  
     я плевелами.  
 [Лиши] спустившись [на землю] от  
     мудрствований высоких,  
 Я становлюсь тем, кто [в действительности  
     есть],  
 Ликом уподобляюсь я ангелам,  
 По намерениям своим - дьявол,  
 Твердо [стою] на ногах я -  
 В мыслях же [вечно] колеблюсь.  
 Притворяюсь я живым - совращаюсь на деле,

Եղինջը հանում եմ և տնկում եմ տատասկ:  
 Հազիվ վեր բարձրացած՝ ցած եմ իջնում դարձյալ,  
 Մտնում եմ բույնն իբրև աղավնի ու դուրս  
     գալիս այնտեղից իբրև ագռավ,  
 Գալիս եմ սակավինչ սպիտակ և գնում եմ  
     բոլորովին սև,  
 Ասում եմ, որ քոնն եմ ես, և սպանողին եմ  
     նվիրում ինձ,  
 Հազիվ եմ ելնում քո դեմ-հանդիման և ահա  
     թիկունք եմ դարձնում քեզ:

### 4

Մաքրվում եմ և սակայն դարձյալ մրոտվում,  
 Լվացվում եմ և աղտոտվում իսկույն,  
 Դավթի կերպարանքն առած,  
 Եվ Սափուղի գործերն եմ կատարում:  
 Շուրթերովս շիտակ եմ խոսում և սրտովս ստում,  
 Աջ ձեռքովս տնտեսում եմ և ձախովս՝ ցրում:  
 Յորեն ցանելու հետ սերմանում եմ և՝ որոմ,  
 Իմաստության բարձունքից ի վայր իջնելով,  
     դառնում եմ ես այն, ինչ էի առաջ,  
 Հրեշտակ եմ դառնում երեսանց և  
     խորհուրդների մեջ դիվանում,  
 Ոտքերովս մնում եմ հաստատ և մտքովս  
     տատանվում եմ,  
 Սուտ ձևեր եմ առնում և իրոք խոտորում եմ,  
 Արդարություն եմ կեղծում և ամբարշտանում  
     եմ գործերով:  
 Հեղերի դասն եմ դասվում և դեերի հետ  
     կաքավում եմ,

Представляюсь правдивым - но творю я нечестие.  
Причисляю себя к сонму смиренных - но пляшу  
с духами злыми.

Людьми я хвалим, а Тобою, Провидцем, хулим,  
Земнородные говорят мне: "Блажен ты!" -  
Сыны света вздыхают: "Горе тебе!"  
Угодничаю я пред последним рабом -  
Теряю в глазах Твоих, о великий Царь!  
Оставив судилище правых - беспутных судей  
умоляю.

Отринутый великими [сими] -  
Льну к простым людям;  
Внешне тело свое наряжаю,  
А душою - цветом на чайку похож;  
Подхожу договором заключить -  
Меня, как клятвопреступника, гонят,  
Сегодня носитель Духа Святого,  
А назавтра - ярый безумец,  
Отвергнув заветы Господни,  
Следую велениям змея; доблестно я мужаю -  
Но с позором отступаю, тяготы дня перенесши,  
В час воздаяния я обездолен;  
На расстоянии велеречив я -  
При ответе, заикаясь, смолкаю;  
При восходе солнца богатым кажусь -  
К вечеру брожу я ни с чем;  
Взобравшись на сиденье старицев -  
Общаюсь с безрассудными я;  
С муками я засыпаю -  
Просыпаюсь, трепеща от страха;

Գովաբանվում եմ մարդկանցից, և տեսանողիցդ  
պարսավում,  
Հողածիններից երանվում եմ, և լույսի որդի-  
ներից ավազվում,  
Հաճոյանում եմ հետին ռամկին և աչքից ելնում  
մեծ թագավորիդ:  
Դատավորի ատյանը թողած՝ խառնակրոններին  
եմ աղերսում.  
Վեհերից վոնդվելով՝ խաժամուժների մեջ եմ  
սպրդում.  
Արտաքուստ մարմնովս պճնվում եմ, և հոգովս՝  
ճայի գույնով եմ ճանաչվում.  
Մոտենում եմ դաշն հաստատելու, և  
ուխտակորույս դուրս եմ վտարվում:  
Այսօր մաքուր հոգեկիր՝ և վաղը մոլի խելագար.  
Տերունի պատվերը թողած՝ հետեւում եմ օձի  
թելաղրանքին.  
Արիանում եմ հզորապես, և ընկրկում եմ  
վատթարաբար.  
Վերցնում եմ օրփա ծանրությունը, և վարձքի  
ժամին մնում անմասն.  
Խոսում եմ հեռվից ճոռոմ, և պատասխանելու  
պահին պապանձվում եմ.  
Արևածագին հարուստ եմ երեսում, և  
արևամուտին դատարկ դեգերում եմ:  
Ծերերի աթոռին բազմած՝ խելահեղների հետ եմ  
ընկերակցում.  
Ննջում եմ կասկածներով՝ և արհավրալից  
զարթնում զարհուած:

Ниву желаний своих я дурно вспахал -  
 Рачителен в попечении о зле;  
 Навеки сын я блудный,  
 Изгнанный, дабы [вновь] не вернулся.  
 Нераскаявшийся грешник я,  
 Безутешно скорбящий, сам собою плененный,  
 Приспешник смерти и тлена,  
 Беспощадно замученный,  
 Неискупимая жертва измены,  
 Отсеченный [сук] я,  
 Негодный к прививке,  
 Погашен я, чтоб не воспламениться;  
 Разбит, не восстановить меня [больше],  
 Разрушен настолько, что уж не поднять меня.  
 И если надобно здесь изречь мне,  
 Душе нечестивой моей хулу безмерную,  
 То вот я пишу, пишу не щадя,  
 Готовя себя, как кучу хвороста, в пищу геенне,  
 Я - созданный завистью нового Адама небесного,  
 Как Каин был [создан] прежним стафыем  
     земным,  
 И несу всегда я в душе обвинения знамение,  
 Но не [вечную] жизнъ, а слов укорение.

#### 4

И ныне где искать мне спасение,  
 Коль проаотец веры в этой юдоли отчаяния  
 Напоминает мне мои злодеяния жестокие,  
 Глава [всех] профоков избивает меня слов  
     камнями,

Անդաստանները կամքիս հերկում եմ  
     վատթարապես,  
 Զարիքների մեջ փութաջան եմ ես՝ մշտապես  
     անառակ որդիս,  
 Տարագրյալս անդարձ և մոլորյալս անդղում,  
 Տրտումս անմիիթար, ինքնագրավ գերիս,  
 Մահան և ապականության ծառաս,  
 Անողոքելի տանջվածս, մատնվածս անփրկելի,  
 Անպատվաստելի կոտրվածս, անարծարծելի  
     հանգածս,  
 Անկազգուրելի խորտակվածս, անվերականդնելի  
     կործանվածս:  
 Եվ եթե պետք է ավելի սաստիկ նախատել  
     այստեղ հոգիս անօրեն,  
 Գրում եմ ահա, գրում անխնա գեհենի խորիվներ  
     պատրաստելով ինձնից  
 Ես երկնայինի՝ նոր Ադամի նախանձոտ ծնունդը  
     հանդիսացա,  
 Ինչպես Կայենը առաջնին՝ հնին և հողեղենին:  
 Ուստի նաև ես այստեղ հոգուս մեջ կրում եմ  
     նշանը ամբաստանության,  
 Ոչ թե չնչառությունս, այլ կշտամբանքը իմ այս  
     խոսքերի:

#### Դ

Եվ արդ, ո՞ւր փնտրեմ փրկությունս ես,  
 Երբ որ հավատքի սկզբնահայրը  
     հուսահատության վայրում  
 Իմ անգթության չարիքներն է հիշեցնում ինձ.

Храбрец достохвальный остирем копья  
     насмерть пронзает меня.  
 Образ истинного [Христа] стирает меня с  
     лица земли вместе с Ахаром,  
 Божественный из великих отдает меня мести  
     гаваонитян,  
 Рожденный пророком прорицает убивает меня  
     перед Господом вместе с амаликитянином,  
 Ревнитель Бога [Илия] скигает меня огнем, с  
     неба сошедшим,  
 Совершенство видения и начало нового  
     крестит меня по выбору лопаты,  
 Глава апостолов [Петр] лишает меня жизни  
     вместе с Санфирай,  
 Дивный [Павел], исследующий Духом  
     [Святым],  
 Благоухание смерти мешает для меня с  
     проповедью жизни.  
 Нелицеприятны ко мне и толпы блаженных -  
 Удалцы, вооруженные силою воли Всевышнего,  
 А вместе с ангелами и людьми,  
 Со вселеною и с землею вместе - стихии;  
 Вместе с бесчувственными - и подвижные,  
 Коими всегда я бываю наказан, на муки  
     осужден,  
 Как пример и в память об ужасе грядущем.  
 Жизнь моя, чей покой вечно возмущают  
 Волны, вздымаемые вихрями бури,  
 Пере менчива и непостоянна.  
 И ежели кто-то возьмется с мудростью

Մարգարեների մեծը խոսքի քարերով է ինձ  
     կոշկոճում,  
 Արին բարեփառ՝ նիզակի սայրով է  
     ստակեցնում ինձ.  
 Ճշմարտի պատկերն է բնաջնջում ինձ Աքարի հետ,  
 Վեհն աստվածարյալ հարագողների վրեժին է  
     մատնում ինձ,  
 Մարգարեածին տեսանողը ամաղեկացու հետ  
 Տիրոջ առջև է սպանում ինձ,  
 Աստծո նախանձավորը՝ երկնատեղաց բոցով է  
     սպառում.  
 Հնի լրումն ու նորի սկիզբը դատաստանի  
     հեծանոցով է երանում,  
 Առաքյալների պետը Սափիրայի հետ է  
     կենագրավում,  
 Զարմանալին քննող՝ հոգով՝ կյանքի քարոզին  
     մահվան բուրմունք է խառնում ինձ համար:  
 Արդ, անաչառ են իմ նկատմամբ նաև  
     կածառներն երջանիկների,  
 Որոնք վերնայնի ուժգին հրամանի  
     սպառագեններն են արիակամ.  
 Հրեշտակների հետ՝ նաև մարդիկ,  
 Տիեզերքի հետ երկրի՝ և՝ տարերքը,  
 Անզգանների հետ՝ և շարժունները,  
 Որոնցով ես միշտ դատապարտվում եմ լկիչ  
     տանջանքների,  
 Իբրև օրինակ և հիշեցուցիչ գալիք սոսկալի  
     չարչարանքների.  
 Եվ իմ այս կյանքի անդորրը խաղաղ

Рассмотреть, то увидит несметное  
многообразие  
Тварей плавающих и сопоставит  
Самомалейшие с очень большими,  
Коим несть числа и количества  
И кои стаями неисчислимыми  
Заревут, содрогнутся, проползут, устремятся  
В чрево моря; засвидетельствует и  
подтвердит он то,  
О чем правдиво мы здесь рассказали.

## 5

А Ты Сам, благословенный и бессмертный  
Царь,  
Благий, Божественный, человеколюбивый  
Христос,  
Единородный Сын Бога живого!  
Могущественный, Всеышний, неисповедимый,  
Неизреченный, очищающий и страшный!  
Упокой смятение растревоженных  
Среди зимы волн души моей!  
Останови разбушевавшееся волнение буйное  
Возмущенного сердца моего!  
Укроти, взнудав, связав тенетами удил,  
Ярость рассеивающихъя мыслей моих.  
Да будет покой велением Твоим, [о] Великий,  
Всерасшатывающему вихрю метели;  
Сгуби, истреби множество голов  
Тайного стыда призраков [души] моей -  
Грабителей, обитающих на земле тела моего;

Ինչպես հողմակոծ փոթորկումներից հավետ  
մրրկված՝ միշտ կալեկոծվի:  
Եվ եթե մեկն իմաստությամբ քննել ուզենա  
Եվ հետազոտել մանր ու մեծամեծ և  
բազմատեսակ, զանազանակերպ  
Անթիվ-անհամար լուղակներն ամեն, որոնք  
խլրտում են երամներով,  
Սուրում-ալանում են եռուղեռով մարմնիս  
ծովի մեջ,-  
Վկայի պիտի և հուսահատի, թե  
Ճշմարիտ է այն ամենը, ինչ որ այստեղ գրեցի:

## Ե

Բայց դու, ո՞վ հզոր և օրհնաբանված անմահ  
թագավոր,  
Բարի, երկնավոր, մարդասեր Քրիստոս,  
Կենդանի Աստծո Միածին Որդի,  
Բարձրյալ անքնին, քավիչ ահավոր և անձառելի,  
Սաստի՛ր ձեռքովդ խորվահույզ հոգուս  
ծփանքները.  
Դադարեցրու վրդովված սրտիս մոլեգին  
հուզման ծափալումները,  
Զսպիր ամրապինդ սանձահարումով  
վայրագությունը իմ ցնդած մտքի:  
Թող խաղաղվի մեծիդ հրամանով սասանող  
բուքը ամենավարան,  
Զնջիր, խափանիր գաղտնի, ուրվային և  
ամոթալի և բազմագլխյան  
Անդամներս ողջ այդ երկրակենցաղ հեներին  
բոլոր,

Почти за молитву присновозносимую,  
 Сию вновь посвященную [Тебе] часть  
 Звуков грустных, жалобной мольбы  
 Моей книги скорбных песнопений;  
 Вырви из глубин бездны смерти меня,  
 Чудом оживи, чтобы [жить мне]  
 Вместе с пророком спасенным;  
 Прими слова исповеди моей самоосуждения,  
 Как воскурение благовоний,  
 Подари утешение мне, отчаявшемуся  
 От яростных ударов горечи беды.  
 И Тебе вместе с Отцом и Духом Святым  
 Слава и честь и владычество вечное. Аминь!



Համարիր աղոթք մշտամատույց՝ ողորմաղերս  
 տողերն այս նորընծա,  
 Որ ողբերգական թախծագին ձայնով կան այս  
 մատյանում:  
 Հանիր ինձ մահվան խոր անդունդներից,  
 Որպեսզի փրկված՝ մարդարեի հետ վերապրեմ և  
 ես գեղեցիկ կյանքով:  
 Ընդունիր խոսքերն իմ այս անձնադատ խոստո-  
 վանության, որպես անուշ հոտ,  
 Շնորհիր սփոփանք դառն վշտերին ուժգին  
 հեծությամբ հուսահատվածիս:  
 Եվ քեզ՝ քո Հոր և քո Սուրբ Հոգով՝  
 Փա՛ռք, պատիվ և իշխանություն հավիտյանս.  
 ամեն:



## Глава 15

### Слово к Богу из глубин сердца

## 1

**В**ернувшись здесь вновь к тем же  
стенаниям скорбящего сердца,  
Возносимым мною к Тебе песнопением этим,  
Кое [сочинено] тем же слогом и [теми же]  
словами,  
Я душой, совершенно измученною сомнениями,  
Обращаюсь к Твоему состраданию, о всем  
дафующий,  
Как заживо умерший молю Тебя, Бога  
бессмертного;  
Но, признавая рядом со славой Твоей мою  
низость  
И рядом со злом моим Твою добродоту,  
Я - клятвопреступник, забывший завет,  
Скорей побежден, нежели исцелен,  
И скорей устыжен, нежели ободрен.  
Подобно овце, обреченнной на бесчувствие  
крайнее,  
О презренном примере коеи говорится в притче  
второй,  
И я, заблудший, бродил в безлюдных горах  
Со злонравными духами средь идолов диких;  
Держась вдалеке от маленькой паства  
[верующих],  
Я не имел языка, коим рассказал бы о скорби и  
бедах моих,

ԲԱՆ ԺԵ

ԱՐՁԻ ԽՈՐՔԵՐԵՑ ԽՈՍՔ ԱԼՏՈՒ ՀԵՑ

## Ա

**Ա**րդ, նույն ցավագին հեծեծանքներով  
վշտահար սրտիս  
եվ բոլորպին տագնապած հոգուս  
տառապանքներով,  
Այս անգամ դարձյալ միևնույն ոճով  
դիմելով ես քեզ,  
Ամենապարզե քո բարերարի գո՛ւթն եմ խնդրելու:  
Պաղատում եմ իբրև մեռյալ՝ կենդանի անմահ  
Աստծուդ,  
Փառքիդ հանդեպ իմ անարգությունը  
խոստովանելով,  
Ինչպես և քո բարությունն իմ չարության դիմաց  
Որոնցով հաղթվեցի ինքս, քան թե բուժվեցի,  
Ամաչեցի, քան թե համարձակվեցի,  
Ուխտակորույսս ես և ավանդամոռաց:  
Այս ոչխարի պես, որին օրինակ է բերում առակն  
երկրորդ,  
Ես էլ ծայրահեղ չափով մատնված անզգայության  
Ու մոլորկելով անմարդաբնակ լեռներում՝ երկար,  
Եվ դեկրի հետ գազանաբարո վայրի կուռքերի  
մեջ թափառելով,  
Առանց թեկուզ փոքր-ինչ հոտին մոտենալու,-  
Չունեի լեզու, որով պատմեի ցավերն իմ տանջող,  
Ոչ էլ ձեռք, որի շարժուձեերով համրերն են  
իրենց մտքերը հայտնում:

Ни подвижной руки, коей изъясняются немые,  
И один только Ты,  
Восхваляемый от начала времен и до ныне  
родившихся,  
Найдя меня, грешного,  
Согласно молитвенному воплю славословившего,  
В беспросветном мраке [заблуждения],  
назвался Пастырем.

Не только заботился, но и искал,  
И не только нашел, о чудеса творящий,  
Но неисповедимой благостью Твоей любви  
Поднял на животворное свое плечо  
И причислил к небесному воинству  
В наследии Отчим Твоем.

## 2

Днесь, о могущественный Животворец,  
благословенный Попечитель,  
Милостивый в сострадании Своем,  
Если Ты принял их,  
По немоте своей неспособных молить, -  
Один из которых был замучен до смерти,  
Другая ж, по неразумению животного,  
обреченнная на скитания,  
Блуждала в безлюдных местах,  
Вопия гласом блеющим,  
Ничего не значащим и безобразным, -  
И Божественным Твоим благопопечением  
Показал удивляющее весь мир сочувствие  
К великому несчастью погибших,

Իսկ դու, միա՛յն գովյալդ, սկսած նախնի  
սերունդներից մինչեւ այսօր,  
Գտնելով և ինձ՝ մեղավորիս էլ մոլորության մեջ  
անլույս ու անել,  
Հստ գոչման առ քեզ մաղթանք երգողի,  
Քո խնամարկու կամքի տեսչությամբ  
Հովհակ կոչվեցիր.  
Ոչ միայն հոգ տարար, այլև փնտրեցիր,  
Եվ, ո՞վ հրաշագործ, ոչ միայն գտար,  
այլև անձառելի բարերարությամբ  
Վերցրիր սիրով դու կենդանարար քո ուսի վրա,  
Եվ քո երկնային զորաց հետ մեկտեղ՝  
Քո հայրենական ժառանգության մեջ դասեցիր ինձ:

## 3

Եվ արդ, դու հզո՛ր, կենարար, օրհնյալ, այցելու  
գթած և մի՛շտ ողորմած,  
Դու, որ ընդունեցիր նրանց՝ անաղերսներին  
այն անկեզու,  
Որոնցից մեկը մահացու խոցված՝ չարչարվում  
էր խիստ,  
Մյուսն անբաների անզգայությամբ  
Փախել էր դեպի հեռու ամայի վայրեր անբնակ,  
Եվ վտարանդի, շվար ու վհատ բառաչում էր  
խեղճ, անիմաստորեն,-  
Քո աստվածային բարեխնամությամբ  
տիեզերահրաշ  
Ցույց տվեցիր դու հոգածությունդ  
թշվառության մեջ կորածի հանդեպ,-

Яви ныне вновь глубину Твоего милосердия  
 И [дафуй] поток щедрот Твоих также мне,  
 Неправедностью превзошедшего тех, что  
     описаны выше в примерах,  
 Мне, что заслуживаю многообразной смерти,  
 Мне, что по горькости вкуса своего  
 Не могу соединиться со сладостью Твоей  
     доброты,  
 Моим членам, достойным отсечения,  
 Моеи душе израненной,  
 Полностью пораженной всестреляющим  
     недугом,  
 Мне, уподобившемуся неразумным животным,  
 Мне, отчуждившемуся от близости мудрых,  
 Мне, что не схож с себе подобными;  
 Коли бы нашелся [такой] образец, я сказал бы,  
 Коли бы кто был похож на меня, я рассказал бы,  
 Коли бы кто был одинаков со мною, я поведал бы,  
 Коли бы кто был равен мне, я написал бы,  
 Коли бы кто так же поступал,  
     я свидетельствовал бы,  
 Коли бы пример был, [мне подобный],  
     я уведомил бы,  
 Коли в прошлом - утешился бы,  
 Коли в настоящем - надеялся,  
 Но поелику я [по греховности] превзошел все  
     примеры  
 И далек от сходства [с кем бы то ни было],  
 То один только Ты можешь очистить меня от  
     грехов,

Հայտնիր արդ և ի՞նձ գթությունդ խոր  
     և բարիքներիդ հորդումներն առատ,  
 Ինձ, որ վեր բերված օրինակներից շատ ավելի  
     եմ եղել անօրեն.  
 Ինձ, որ մահապարտ եմ բազմօրինակ.  
 Ինձ, որ բարության քաղցր խառնուրդում՝  
     հատուկ համ եմ չար.  
 Ինձ, որ արժանի եմ անդամներիս հատմանն  
     արդարեւ,  
 Ինձ, համաճարակ ախտով վարակված վիրավոր  
     հոգուս.  
 Ինձ, որ անզգա անասուններին եմ  
     հավասարվել  
 Եվ օտարացել իմաստունների  
     ընտանությունից.  
 Ինձ, որ նման չեմ բնությամբ ինձ պես  
     բանականներին:  
 Եթե մի օրինակ ունենայի, ես կասեի.  
 Թե նմանակից ունենայի՝ կպատմեի.  
 Թե հանգունակից ունենայի՝ կխոսեի.  
 Թե ինձ հավասարն ունենայի՝ կգրեի.  
 Թե նույն բանը անողն ունենայի՝ ցույց կտայի.  
 Թե ինձ համեմատն ունենայի՝ կիմացնեի.  
 Թե անցյալում լիներ՝ կսփռփռվեի,  
 Թե ներկայումս՝ կհուսայի:  
 Սակայն, քանի որ ոչ նմանս ունեմ, ոչ էլ  
     օրինակ,  
 Ուստի դո՛ւ միայն կարող ես քավել ու բժշկել  
     ինձ և կենսագործել,

*Исцелить и чудотворить, -  
[Ты, кто] возвращает к жизни всех мертвых  
И обновляет всю вселенную.*

### 3

*Коли, согласно прозрению святого сердца  
Давида блаженного,  
«Беззакония превысили голову,  
Как тяжелое бремя отяготили» греховные  
преступления,  
То совершенные мной прегрешения  
Превосходят обилие, как море разлившихся,  
Все поглотивших и уничтоживших вод потопа  
И покрыли вершины гор,  
Но пусть, как во времена Ноя,  
Подует сладостный Твой ветер,  
Что обладает могуществом плавит горы  
И иссушать бурлящие волной водоемы,  
И [уничтожит] мои преступления,  
губящие землю,  
И круто вздымающиеся горы моих грехов.*

### 4

*Кратким и властным словом Своим  
Ты, всесильный и всемогущий,  
Укажи мне способ через небольшое возмездие  
обрести прощение,  
Мне, который, по слову пророка,  
Долго «влек на себя беззаконие»,  
И, простив мне мою непокорность,*

*Կենդանարարդ բոլոր մեռելների և նորոգո՛ղդ  
տիեզերաց:*

### 4

*Զի եթե երջանիկ, սուրբ ու սրատես  
Դավիթի գործած չարիքներն ու  
Անօրենությունները գլխից ավելի վեր  
բարձրացած էին,  
Եվ մեղերն ու հանցանքները դժվարակիր  
բեռների նման ծանրացած սաստիկ,  
Հապա ուրեմն իմ սխալմունքներն ավելի են, քան  
Տիեզերասույզ, ամենասպառ ծովի ջրակուտակ  
հեղեղի հորդությունը  
Ու անցնում են բոլոր լեռների կատարներից:  
Բայց թող որ փէք քաղցրաշունչ քամիդ,-  
Ինչպես այդ եղավ Նոյի ժամանակ,-  
Որ լեռներն անդամ կարող է հալել,  
Ցամաքեցնելու բազմակոհակ ջրակույտն իմ  
երկրակործան հանցանքների  
Ու լեռնակարկառ բարձրությամբ դիզված  
մեղերն իմ բոլոր:*

### 5

*Եվ արդ, համառոտ քո խոսքով հզոր,  
Եվ ամենակարող հնարավորությամբ կարճ  
դատաստանիդ,  
Հստ մարգարեի, քավության մի ելք ցույց տուր  
ինձ՝  
Անօրենության մեջ ընդերկար մոլորայլիս:*

Долготерпеливый, милосердный,  
 благословенный,  
 Дарай мне полное отпущение,  
 Подлинно облагодетельствуй,  
 Вовсе отмени тяжкую и жестокую пеню -  
 Лихву за неоплатные мои долги,  
 Уплата коеи [была бы лишь] справедливой,  
 Тем более что сердце Твое не гневливо  
 И не вспыхивает никогда яростью,  
 Несвойственно Тебе вороломство,  
 И нет в Тебе и следа мрачности,  
 Ибо воля Твоя - [источник] жизни и света,  
 И не Ты сотворил смерть,  
 И не возрадует Тебя гибель человека,  
 Как речено Давидом и Соломоном.

## 5

В законах благого завета Твоего  
 Ты людям положил великое условие -  
 Не воздавать злом за зло, а прощать греховные  
 долги  
 «До семижды семидесяти раз» на день.  
 И это слово Ты сказал нам,  
 Всегда имеющим по своей природе  
 Несчетные тьмы вновь обновляющихся,  
 Врожденных пятен порока,  
 Которые согласно законам [плоти]  
 Возникают на поле нашего естества,  
 Рождающего разных видов терпии  
 Согласно Твоему правдивому свидетельству:

Եվ դու, ներելով համառությունն իմ,  
 Ո՞վ երկայնամիտ, ողորմած, օրհնյալ,  
 Շնորհի՛ր ինձ կատարյալ թողովթյուն և  
 բարեգործիր ճշմարտապես,  
 Ձնջի՛ր բոլորովին՝ անվճարելի պարտքերիս  
 արժանահատույց տոկոսների տույժը  
 տաժանակիր:  
 Զէ՞ որ դու չունես ցասումնալից սիրտ ու  
 բարկովթյուն բորբոք,  
 Ինչպես նաև չկանք քո մեջ նենգություններ և  
 նշաններ մթության,  
 Քանզի դու կյանք են կամենում և լույս,  
 Դու մահ չստեղծեցիր և, ըստ Դավթի ու  
 Սոլոմոնի,  
 Մարդու կորուստը քեզ ուրախություն չի  
 պատճառում:

## Ե

Քո բարեվիճակ կանոնների մեջ դու մեծագույն  
 պայման սահմանեցիր մարդկանց համար՝  
 Զարությունը չարությամբ չփոխարինել,  
 Այլ մի օրվա մեջ յոթանասունյոթ անգամ  
 գործած մեղքերը նույնիսկ ներել  
 պատգամեցիր մեզ,  
 Մեզ, որ ի բնե հակամետ ենք միշտ ի հայտ  
 բերելու բյուր ու անհամար չարության բծեր,  
 Որոնք ածում են ու միշտ նորոգվում  
 Մեր ամեն տեսակ փշեր բուսցնող բնության  
 դաշտում՝

*«Помышление сердца человеческого - зло от юности его».*

И даже совершенный чистотой своей,  
«Слово жизни» Твоей евангелист Иоанн,  
Как если б обладал общим для всех естеством,  
Подтвердил слово истины Твой,  
Что вполне справедливо и для лжи моей.  
«Если говорим, что мы не согрешили, - сказал он,-

*То представляем Его лживым».*

И вот совершенно слово Твое достохвальное,  
Неоскудевающее в истинности своей,  
Преодолевшее заблуждением и неправедностью  
жестокой.

Посему пощади меня, сострадая, о Источник,  
сладостный на вкус,  
Один лишь Ты благословляешь всеми в веках.  
Аминь!

*Համաձայն անսուլ քո վկայության,  
Թե՝ «Մարդու միտքը իր մանկությունից  
տրամադիր է չարիք գործելու»:  
Քո կենաց բանի ավետարանիչ  
Հովհաննեսն անդամ,  
Որը մաքուր էր կատարելապես,  
Նա ինքը՝ որպես հասարակության բնության  
լծակից,  
Ամբողջովին արդարացած՝ քո ճշմարտությունը  
հաստատեց իմ ստության հանդեպ:  
«Եթե ասենք, որ ոչ մի մեղք չունենք,՝ ասում է նա,՝  
Սուտ դուրս բերած կլինենք նրան»:  
Արդ, կատարված է խոսքդ խնկելի  
եվ լիովին ստույգ արդարացված  
իմ մոլորության խիստ դժնդակ անիրավության  
հանդեպ:  
Ուստի խնայի՛ր ինձ ողորմությամբ,  
քաղցրահամ աղբյուր,  
Դու միայն օրհնյալ հավիտյանս. ամեն:*



## Глава 10

### Слово к Богу из глубин сердца

1

*Коалику исступленное покаяние,  
Как и необузданное грешение,  
Равно к погибели ведут,  
То хотя разнородны они и не схожи между  
собой,  
Однако, сопоставляя суть каждого из них  
друг с другом,  
[Видишь], что оба они порождают отчаяние,  
Ибо при первом сомневаешься в силе дланей  
Всемогущего,  
При втором же, уподобившись неразумной  
скотине четвероногой,  
Обрываешь нить надежды [на обращение].  
Посему, неизменно повторствуя первому,  
Радуется всегда сатана,  
Вторым же, как пищей кровавой,  
Утешняется он, словно зверь прокорликий  
с утробой адской.*

2

*И вот, как [человек], побитый  
многонаказующей палицей  
И дошедший до брега смерти,  
Я, обретя вновь слабое дыхание и оживившись  
душой,  
Утешился, набрался сил,*

ԲԱՆԸ  
ԱՐՁԻ ԽՈՐՔԵՐԵՑ ԽՈՂԱՔ ԱԱԾՈՒ ՀԵՑ

**Ա** Ե' զղջումն ուժգին և թե' մոլեգին  
մեղանչումը մեզ  
Կորսայան են մատնում հավասարապես:  
Թեպետև նրանք օտար են միմյանց և  
նմանությամբ իրարից տարբեր,  
Բայց եթե քննենք յուրաքանչյուրի էությունը մենք,  
Պրտի տեսնենք, որ նրանք երկուսն էլ մղում են  
մարդուն հուսահատության:  
Զի կասկածում է մեկը  
Հզորի ձեռքի զորությանն,  
Իսկ մյուսը չորքոտանի անասնի նման,  
անգայաբար  
Խզում է հույսի առասանն իսպառ:  
Ուստի առաջնին միշտ փաղաքշելով՝ խնդում է  
սատանան,  
Իսկ երկրորդով լիզելով արյունն, իբրև կերակուր՝  
Պարարվում է նա դժոխորովայն գաղանի նման:

**Բ** Արդ, բազմահարված բրով ծեծվածի և մահվան  
ափը հասածի նման  
Դույզն-ինչ շունչ դարձյալ և կենդանության  
ողի առնելով՝  
Պատք է զորանալ, կազդուրվել ու կանգնել,  
Հառնել կորստից անկենդանական,

Восстал из бездны неотвратимой гибели,  
 Вспомоществуемый дланью милосердного ко  
     всем Христа,  
 Дабы получить мне, грешному, порочному и  
     мертвому,  
 Плоды спасения и исцеления  
 От благодетельного Отца Небесного.  
 И в начале этих молитвенных скорбных  
     песнопений  
 Я воздвигну здание веры,  
 Ибо и в древности некто, вооруженный ею,  
 Пересялся немедля в бессмертную жизнь  
     небесную:  
 Приняв лекарство покаяния в грехах,  
 Он ценою раскаяния  
 Получил свидетельство нетленности своей  
     уже в этой жизни  
 Ранее тех, о коих упоминает апостол,  
 И кои еще [здесь], на земле,  
 «Среди поношений и скорбей» служили  
     зрелищем [для других],  
 Уверовав в грядущее небесное упование  
 И обогатившись славой невидимой.

### 3

{И тот, кто снова заключен в узилище злых духов,  
 И тот, кто погружен в пучину зла, -  
 [У всех] есть слабая [надежда] на спасение жизни,  
 На то, что снова обретут чрез нее  
 Очищение от грехов,

Огнеплавя в апаша фрихиши ки дешвопу, ор գո՛ւթ  
     է տածում բոլորի հանդեպ.  
 Նաև երկնավոր բարերար Հորից ձեռք բերեմ  
     պտուղ փրկության և բժշկություն  
 ինձ՝ մեղավորիս և ախտավորիս.  
 Եվ սկսելով ողբերգությունն այս աղերսանքների,  
 ես հավատքի շնչը պիտի կառուցեմ:  
 Զի ոմն նախնիներից հավատքով զինված՝  
 Փոխադրվեց իսկույն երկնային կյանքն  
     անմահական.  
 Ապաշխարության դեղն ընդունելով, զղման  
     միջոցով  
 Նա անկեղծության գրավականը ժառանգեց  
     այստեղ,  
 Առավել քան նրանք, որոնց նրա հետ առաքյալն  
     է հիշատակում.  
 Որոնք երկորի վրա մրցման հանդեսներ կատարելով,  
 Ապագա երկնավոր պարգևների հույսով՝  
     հավատացին  
 Ու փարթամացան անտեսանելի  
     ճոխություններով:

### 4

Արդ, հիշենք այստեղ Տիրո՞ջ պաշտելի խոսքը  
     իրախուսիչ,  
 Թե՝ «ամենայն ինչ հնարավոր է նրան, ով  
     հավատում է»:  
 Եթե ընտրյալների աստվածահաճո  
     բարեմասնությանց չափն այստեղ քննենք.

Словно бы должник слезами очей своих  
 Вновь стал по милосердию Вседержителя  
 Плодоносящей землею, предивно цветущей,  
 Что принесена в жертву Духу Божиему,}\*\*<sup>1</sup>  
 Вспомним здесь также целительные  
 И внушающие надежду слова Господа:  
 «Все возможно верующему».  
 Это исповедание слова окажется первой и  
     главной  
 Средь добродетелей, Богу угодных и избранных,  
 Если станем исследовать здесь меру  
     достоинств их,  
 Ею лишь обличившихся, войдем мы в святая  
     святых.  
 Даже Господь - [Бог] славы,  
 Прежде чем явить нам Свое чудодейственное  
     могущество,  
 Потребовал в сопутники Своему благодеянию  
     нашу веру,  
 И поелику она непосредственно обращена к Богу,  
 То обладает достаточным могуществом  
 Сама по себе дають жизнь,  
 [Ибо], как свидетельствуют благословенные  
     уста Божии,  
 «Вера твоя спасла Тебя».

#### 4

И действително, ясность видения и  
     совершенная мудрость,

\* Ընդգծված հատվածը բացակայում է հայերեն լավագույն ձեռագրերում և հրատարակություններում - ծնթ. հրտ.:

Հավատքը պիտի գտնենք գերազանց,  
     ամեն ինչից վեր,  
 Քանզի նրանով կարող են մտնել սուրբ  
     խորանից ներս:  
 Առանց հավատքի փառաց Տերն անգամ  
 Զհաճեց ցույց տալ իր հրաշագործ զորությունը  
     մեզ,  
 Այլ նախ և առաջ իբրև լծակից իր  
     բարերարությանը,  
 Մեր հավատքը նա պահանջեց մեզնից:  
 Նա՝ է մոտեցնում մարդուն Աստծո,  
 Կյանք ընձեռելով մեզ իր ինքնիշխան  
     ընդունակությամբ,  
 Զի օրհնաբանված Աստծո բերանն էր,  
     որ վկայեց,  
 Թե՝ «Հավատքը քո փրկեց քեզ»:

#### Դ

Քանզի արդարև հստակ տեսողությունը,  
     կատարյալ իմաստությունը,  
 Մտերմությունն Աստծո հետ և Բարձրյալին  
     ծանոթ լինելը  
 Հավատքի մասն են - մի երջանիկ և ընտրյա՛լ  
     բառ,  
 Որ հարատեելով մնում է անվթար և  
     անպարփակ,  
 Պատվակից լինելով սիրո և հույսի:  
 Զի մանանեխի ամենափոքրիկ հատիկի չափով  
     Հավատքը եթե

Близость к Богу и познание Всевышнего  
 Суть удел веры - имени блаженного и  
 избранного, -  
 Коя пребудет вечно непогрешимою и  
 беспредельною,  
 Разделяя славу с любовью и надеждою.  
 Ибо, коли вера величиной с малое семечко -  
     зерно горчичное -  
 Может смело перемещать громады гор в  
     глубины моря,  
 То поистине мы эту веру приняли  
 Как впереди ходящего проводника по жизни,  
 Как неколебимое Богопочитание.  
 Вместе с любовью и надеждою  
 Удостоенная имени восхваляемой Троицы  
 Веря видит очами духовными без колебаний  
     ожидаемое и невидимое.  
 Коли эти три разные [по естеству]  
     добродетели  
 Ты рассмотришь в одном, едином таинстве,  
 То премного возвысишься ими в Боге,  
 Ибо коли уверуешь в Него, то полюбишь  
 И обретешь тем самым надежду на невидимые  
     дары Его.  
 Слава Ему вечная. Аминь!



Կարող է ծովի խորքը փոխադրել մեծամեծ լեռներ,  
 Ապա ճիշտ է, որ կյանքի առաջնորդն այս  
     նախաշավիղ  
 Հավատն ընդունեցինք որպես աներկմիտ  
     աստվածապաշտություն:  
 Սիրո և հույսի դասակից և երրորդության  
     փառատրելի անվամբ պատված,  
 Այդ հավատքն է, որ հոգու աչքերով  
     աներկրայորեն  
 Տեսնում է ծածուկները բոլոր և ապագան:  
 Քանզի այս երեք առանձին մասերն եթե միասին  
     և նույն խորհուրդով դիտես,  
 Նրանց շնորհիվ, Աստծով պիտի հավետ  
     ճոխանաս:  
 Քանզի եթե հավատաս նրան, կսիրես նաև,  
 Որով և կհուսաս նրա աներևույթ պարգևներին:  
 Նրան փա՛ռք հավիտյանս. ամեն:



## Глава 74

### Слово к Богу из глубин сердца

1

**Ч**арв Небесный, Владыка всего,  
Бога живого неисповедимый Сын!  
Превыше всех слов [Твоя доброта],  
всегда и во всем Ты долготерпелив!  
Поистине милосерд Ты там, где пресечено  
ожидание мзды,  
Благодетелен там, где помрачилась ясность  
разума,  
Человеколюбив Ты тогда, когда опасность  
немощи,  
Окружив изнутри и извне, завладела [душой];  
Тогда исцеляет длань Божья Твоя,  
Когда все части [тела] перестали дышать,  
Попечителен Ты там, где болыше нет  
возможностей выхода,  
Величав Ты тем, что исцеляешь раны  
отчаяния,  
Свойственно природе Твоей в час нежданный  
спасением одаряешь,  
Там будет видна победа Твоя, когда жизни  
моей закрытую дверь  
При последнем вздохе моем Ты [вновь] отворишь.  
Те благодеяния достойны Тебя, когда, позабыв  
злодейства мои,  
Ты будешь помнить [лишь] милосердие Свое.  
Тем Ты незлобив, что попечительствуешь

ԲԱՆ ՀԴ

ԱՐՁԻ ԽՈՐՔԵՐԵՑ ԽՈԼԱՔ ԱԱԾՈՒ ՀԵՑ

Ա

**Ա**րքա՛ երկնավոր, դու Տե՛ր բոլորի,  
Ամեն բանի մեջ և ամեն դեպքում միշտ  
երկայնամիտ,  
Կենդանի Աստծո անքնին որդի:  
Այնտեղ պետք է ողորմել իսկապես,  
Ուր կտրված է հույսը վաստակի.  
Այնտեղ պետք է բարեգործել,  
Ուր խափանված է մտքի տեսողությունը.  
Այնժամ պետք է մարդասիրել,  
Երբ տկարության վտանգն է պաշարել  
ներքուստ և արտաքուստ.  
Այնտեղ է անհրաժեշտ ձեռքիդ բժշկությունն  
աստվածային,  
Ուր տեղի է տվել բոլորովին անդամների  
կենդանությունը.  
Այնտեղ պետք է լինի այցելությունը,  
Ուր ելքի հնար չկա.  
Այնժամ է քո մեծությունը,  
Երբ անհուսալի վերքն առողջացնես.  
Այն է հարազատ քո բնությանը,  
Որ անակնկալ ժամին փրկության համար  
հրաշագործես,  
Այն ժամանակ հանդես կդա քո հաղթանակը,  
Երբ վերջին շնչիս՝ կյանքի փակված դուռն իմ  
առջև բանաս.

Мне, неблагодарному, вкупе с  
добротельными,  
И тогда лишь я уразумею, пойму,  
Что с благосклонностью прежней  
Свой взор обратил Ты на словесный  
мой дар,  
Когда Ты изведешь мои наклонности злые.

2

И посему [лишь] плетутся слова  
И воспеваются славословия,  
Когда добрый государь жалует злому рабу  
То же, что и добродетельным.  
Кто по праву ожидает темницы -  
Тому дарует покой Он в царских хоромах;  
Кто призван был в яму с тиной [на дне] -  
Того среди многих приглашенных [на пир],  
[Отличив], обнимает на троне;  
Кто ждет, что ему выколют глаза, -  
Тому покажет Он счастья вершины;  
Кто ожидает отсечения пальцев -  
Тому преподносит Он перстень отваги;  
Кто готовится к ударам дубинкой -  
Того добродушино заключает в обятия;  
Кто готов уж к крушению надежд -  
Того отличает при свидетелях многих;  
Кто чает [только] нагубы смерти -  
Того одаляет вместе с жизнью и славой;  
Кто думает об отсечении главы -  
Того Он венцом тем прославляет.

Այն են շնորհներդ վայելչական,  
Որ մոռանալով իմ չար գործերը՝ քո բարիները  
հիշես.  
Նրանով ես դու անոխակալ,  
Որ ապերախտիս երախտագետի հետ խնամարկես.  
Այսժամ ես միայն պիտի հասկանամ,  
Թե ընդունեցիր բանավոր նվերս՝ նախկին  
գթությամբդ,  
Եթե վերացնես իմ չար սովորությունները:

Բ

Այս պատճառով են հյուսվում ճառեր ու  
նվազերգություններ եղանակվում,  
Երբ Տերը բարի՝ բարեգործներին հասանելիքից  
պարզեատրում է և չար ծառային:  
Այսպես որ մինչ նա բանտի է սպասում իրավամբ՝  
Տերը նրան արքայական ապարանքի մեջ է  
նստեցնում.  
Մինչ կանչված է նա տղմուտ գուրի մեջ  
բնակվելու,  
Նրան ամեն տեսակի կոչունքների մեջ գահերի  
վրա է բազմեցնում.  
Մինչ նայում է նա, որ աչքերը փորեն,  
Նայվածքը նրա ուղղում է դեպի ուրախ  
բարձունքներ.  
Մինչ սպասում է նա իր մատների ծայրատումին,  
Համարձակության մատանի է մատուցում նրան.  
Մինչ վախենում է գանակոծվելուց,  
Նրան գթառատ իր գիրկն է առնում.  
Մինչ կորսոյան է պատրաստվում ահով,

Вот они, Всеблагий, благословенные  
     ростки  
 Чудоейного сияния Твоего,  
 Вот плоды жизни повелений Твоих  
     созидательных,  
 Вот смысл обетованных Тобою желаний,  
 Вот проблески света всепроницающих лучей  
     Твоих!  
 Вот наслаждение от вкушения  
 Славословляемой милости Твоей!

### 3

[Все] это Твое лицо, о Господи,  
 Тобой внушено мне написать сие;  
 И вот, благословляемый, умоляю [Тебя],  
 Тобой же [внушенную] мольбу особую  
     Ты приемли,  
 Из своей [выси] сделай милость, исполни.  
 Отверзи, Господи, сокровищницу благ Своих,  
 Как просит [о том] мольба притченица;  
 Не примешивай к запасу благостей Своих  
 Часть злодеяний моих;  
 Не собирай Ты ненавистные  
 Тебе мстительность, ярость  
 С дорогими Тебе добротой, милосердием;  
 Не храни вместе с обожаемым  
     достоянием Твоим  
 Неприятные Тебе мрак и жестокость  
 И вредящие мне грехи и несчастье;  
 Благословенной десницей Своей

Բազմության առաջ, ի տես բոլորի՝ վեր է  
     բարձրացնում.  
 Մինչ նա սատակիչ մահվան աչք ունի,  
 Նրան կյանքի հետ տալիս է և՝ փառք.  
 Մինչ սպասում է իրեն գլխատեն,  
 Նրան պսակով է պայծառացնում:  
 Սրանք են, գթա՛ծ, պտուղներն օրհնյալ քո  
     սքանչելարմատ շառավիղների.  
 Սրանք են կյանքի արդասիքները քո  
     արարչական հրամանների.  
 Սրանք են լղձալի խորհուրդները քո  
     խոստովանված տենչանքների.  
 Սրանք են լույսի ճաճանչները քո ամենասիյուռն  
     ճառագայթների.  
 Սրանք են ախորժելի ճաշակները քո բարեբանյալ  
     քաղցրության:

### 4

Եվ այս բոլորը քոնն են միայն, Տե՛ր,  
 Քո ներշնչումով եմ գրել սրանք.  
 Ուստի ես, օրհնյալ, աղաչում եմ քեզ, այդ  
     պարզմերիցդ ի՞նձ էլ չնորհիր.  
 Բա՛ց, Տեր, քո բարիքների գանձարանը, ըստ  
     առակողի աղերսանքների:  
 Բարիքներիդ ամբարներում չխառնես դու իմ  
     չարիքներից.  
 Չտեմարանես քեզ համար սիրելի գթության  
     և ողորմության հետ ատելի ոխեր և  
     բարկություններ.

Ты не вписывай в книгу Жизни Свою  
Проклятия письмо заемное за грехи мои,  
И, показав приемлемым и легким  
То, что считалось для меня невозможным,  
Тем наипаче величиши, о Господи,  
Ты вновь [благословенное] имя Свое.

4

Велики прегрешения мои,  
И несть им числа,  
Но не столь дивны они,  
Как милосердие Твое;  
Множество грехов у меня,  
Но все меркнут они пред снисхождением  
Твоим;  
Часты злодеяния мои,  
Но все они побеждены  
Твоим, Вседержитель могучий, человеколюбец.  
Не счастье самому мне изъянов моих -  
Тебе же легко справиться с ними;  
Не столь могущественно оружие грехов,  
(Кои я, пристыженный, [щедро] наплодил),  
Дабы возродить мне их снова,  
Сколько [сильна] память о смерти Твоей,  
Бессмертный [Христос],  
Дабы изгнать зло погубителя.  
Чем помешает легкий мрак  
Божьему дню Твоему?  
Как состязаться будет ничтожная мгла  
с сиянием Твоим, о Великий?

Քո պաշտելի ստացվածքներում չպահե՛ս քեզ  
Համար անախորժ մթություններ ու  
դժնություններ,  
Եվ ինձ վնասող մեղքեր ու թշվառություններ:  
Կյանքիդ մատյանում քո օրհնյալ աջոկ չգրե՛ս  
դու պարտամուրհակն իմ անեծքների,  
Այլ ինձ համար անհնար համարվածները  
դյուրին ու հեշտ ցույց տալով՝  
Կրկնակի անգամ և է՛լ ավելի մեծացնես դու քո  
անունը, ո՞վ Տեր:

Դ

Տալիքներս շատ են և անհաշիվ,  
Բայց քո հրաշալի ողորմությունն անհամեմատ  
ավելի է.  
Բագում են մեղանչանքներս,  
Բայց ներողությանդ հետ համեմատած՝ շատ  
քիչ են նրանք,  
Հաճախակի են չարություններս,  
Բայց հաղթող է միշտ ամեն բանի դեմ  
մարդասիրությունդ, ո՞վ ամենակալ.  
Անձիս արատներն ինձ համար են ծանր և  
անթվելի,  
Բայց քեզ համար խիստ թեթև են նրանք և  
սահմանափակ.  
Ամոթապարտիս պտղաբերած մեղքերի գենքերն  
այնքան զորեղ չեն կենդանանալու,  
Որքան հիշատակն անմահիդ մահվան՝  
կործանողի բռնությունը վանելու համար:  
Փոքրիկ խավարն ի՞նչ կարող է ազդել

Ужель сластомобие незрелое  
слабой плоти моей  
Может сра вниться с Крестом  
страданий Твоих?  
Чем кажутся в глазах Твоих щедрых,  
о Вседержитель,  
Груды прегрешений во вселенной всей,  
Коль не кучей земли, легко разрыхляемой,  
Пропадающей под ударами сильными,  
[Иль] пузырями [капель] дождевых,  
Лопающимися, исчезающими от излияния  
щедрой воли Твоей?

5

Не нужно могу ществу и предивному всесилию  
Твоему  
Лишнее время для искупления прегрешений  
моих.  
Ни мановения ока [не нужно],  
Ни скорого взгляда мимолетного,  
Ни быстрого взора сверкающего,  
Ни легкого мешкания,  
Ни торопливой поступи,  
Ни [мига], чтоб капля упала  
С высоты локтя одного.  
Не [нужно мига], чтоб в уме линию провести  
И чтоб быстрому лучу [света] пройти,  
Не нужно мига, чтоб вдохнуть и выдохнуть.  
Из всех сих незначащих и несовершенных  
Примеров бесформенных, подобий изменчивых

Աստծուդ լույսին.  
Դույզն աղջամուղջը ինչպե՞ս դիմանա  
ճառագայթներիդ.  
Քո խաչելության չարչարանքի հետ ինչպե՞ս  
կշռվի  
Իմ տկար մարմնի հեշտասեր խակությունը.  
Ամենակալիդ առաստության աչքին ի՞նչ են որ  
մեղքերի կույտերը ողջ տիեզերքի,  
Եթե ոչ հողի դյուրափիլուն կոչտ, որ իսկույն  
և թիգիշիանա քարի հարվածով,  
Եվ կամ անձրևի պղպջակ, որ կամքիդ  
հորդառատ հոսմամբ կպայթի իսկույն և  
կչքանա:

Ե

Քո ամենագոր և ամենահնար կարողությունը  
Իմ հանցանքները քավելու համար ժամանակի  
պետք չունի բոլորովին,~  
Ո՛չ ակնթարթի,  
Ո՛չ թռուցիկ ակնարկի տևողության,  
Ո՛չ կայծակնային կարճատև նայվածքի,  
Ո՛չ ամենափոքր ուշացման,  
Ո՛չ փութագնաց ոտքի քայլափոխի,  
Ո՛չ կանգունաչափ բարձրությունից կաթիլի  
անկման,  
Ո՛չ մտքով քաշված մի գծի,  
Ո՛չ լույսի արագության,  
Ո՛չ շնչառության չափ միջոցի:  
Այս բոլոր անձեւ, աննշան և անկայուն  
օրինակներից

Нет ни одного столъ преходящего иль  
 необратимого,  
 Сколько груды льдин грехов моих, о Бог всего  
 [сущего],  
 Кои исчезнут, испарятся, расстают  
 Волею Твоей, Иисусе Христе,  
 Неисповедимый Сын Бога Живого.  
 Ты ниспосылаешь и дафуешь солнце  
 Благоволения злым вкупе с добрыми  
 И льешься дождем равно на каждого;  
 Взвешиваешь и распределяешь  
 Равномерно и беды пороков.  
 Тем, кто [безгрешен], в великом покое  
 Ждет даров [Твоих] -  
 Поощряя искусством легким.  
 За небольшие грехи воздаешь [уже] здесь,  
 А тех, кто избрал землю [долей своей],  
 Ты милосердно прощаешь,  
 Попечительствуя им вместе с теми,  
 Ожидая вечно обращения к Себе.  
 И Тебе, всемогущему, слава  
 Во всех дивных делах,  
 [Творимых] с попечительным долготерпением,  
 Благословенный вовеки. Аминь!



Ո՞չ մեկը այնքան առժամյա արագ և փութանցիկ  
 չէ,  
 Որքան մեղքերիս կուտակված սառույցների  
 հալվելը, ցնդելն ու վերանալը քո  
 զորությամբ,  
 Աստված բոլորի Տեր Հիսուս Քրիստոս,  
 Որդիդ անքնին կենդանի Աստծո:  
 Դու, որ քաղցր արև ես պարզեռում բարիների  
 հետ նաև չարերին,  
 Եվ անձրեռում ես ամենքի վրա անաչառորեն,  
 Կշռում ես իրավամբ և չափում նրանց վշտերն  
 ու հոգսերն հավասարապես.  
 Փորձության փոքրիկ խթանով ես դու վճարել  
 տալիս պարտքերը նրանց այստեղ իսկ,  
 Որոնք մեծ համբերությամբ սպասում են վերին  
 հանգստին:  
 Իսկ ովքեր երկրային կենցաղն ընտրեցին,  
 Դու ողորմությամբ ներում ես նրանց,  
 Սրանց էլ տալով դարձան նրանց հետ՝ սպասում  
 ես դու միշտ նրանց դարձին:  
 Փա՛ռք ամենազորիդ՝  
 Բարեխնամ երկայնամտությամբ գործած քո  
 բոլոր հրաշքների համար,  
 Օրհնյա՛լ հավիտյանս. ամեն:



## Глава 52

### Слово к Богу из глубин сердца

1

**К**одлинно благословенный в Своем  
естестве,  
Беспределенный и неизменный, воистину  
добрый,  
Достойный поклонения с воскурениями,  
Блаженство, исповедуемое всей землей,  
Совершенный глагол упования бесконечного,  
Благий, милосердный, кто ни мгновения  
Не помнит обид многолетних грехов,  
Ты, одаряя внове милостями Своими,  
Излил соизволил достойные обожания  
Потоки небесные милосердия  
С изобилием дивным, чудесным и беспредельным,  
Многажды превосходящим [дафованное]  
народам древним.  
Створки узкого проема окна, сквозь кое  
проникали,  
Как речет Соломон,  
Лишь слабые отблески несовершенных знаний,  
И для него, а вместе с ним и для меня  
Ты расширил, распахнув предо мною,  
злосчастным,  
Завесу, что преграждала путь благодати  
Даров Божественных и безвозмездных.  
Их образы Ты предначертал уже в Ветхом  
[Завете]

ԲԱՆԾՔ  
ԱՐՁԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈԼԱՔ ԱԱԾՈՒ ՀԵՑ

Ա

**Օ**րհնյա՛լ տիրապես էությանդ մեջ,  
Անսահմանելի, անփոփոխելի, իսկապես բարի,  
Պաշտում խնկելի և երջանկություն  
խոստովանելի ամենայն երկրի,  
Հարատև հույսի ամենապատրաստ դու  
հայտնություն,  
Գթած, ողորմած, որ չես պահում ոխ մի  
ակնթարթ իսկ  
Ընդդեմ բազմամյա մեղանչումների:  
Անսահման առավելությամբ և հրաշապես  
զարմանալի,  
Ավելի, քան թե երբեք բոլոր նախահայրերին,  
Դու քո երկնահոս և բարեբանյալ վտակները  
ողորմության  
Նոր շնորհաբաշխությամբ՝ մեկի տեղ կրկնակի  
հաճեցիր հեղել:  
Երբեմնի անձուկ լուսամուտը այն, որտեղից  
հազիվ, ըստ Սողոմոնի,  
Զափափոր գիտությունների աղոտ նշույլներն  
էին թափանցում,  
Դու, ինչպես նրա, այնպես նաև ինձ՝ թշվառիս  
համար բացիր ընդարձակ,  
Առագաստն այն անջրպետող, որ արգելում էր  
Մուտքն աստվածային ողորմության ձրի  
պարգևների:

Արք Ս. Պափարափից և Ս. Հաղորդություն սրբանալուց առաջ

Чрез отдельные благовестующие речения,  
Говоря: «Обратитесь ко Мне, и Я обращаюсь к  
вам»,  
«Когда обратишься и возрываешься,  
тогда возродишься».

## 2

«Черный цвет тьмы преобразуешь в белизну  
снега  
И окрашенным кровью людям придаешь  
чистоту руна»,  
Как речено Исаией и Закарией.  
И во гневе Ты снова вспомнишь милость:  
Обезлюдеют города Израиля и вновь будут  
заселены,  
И опустеют дороги из-за отсутствия людей  
И вновь оживленными станут,  
Ослабеют души от голода  
И снова укреплены будут дланью [Твою],  
И во гневе удалится Бог в Свое место,  
Но вновь воротится с милосердием  
И по снисходительности помошь окажет,  
И, угрожая и устрашая, Он вдвойне  
заступится,  
И в разгневанном сердце Его будет и чувство  
благодатного попечения.

Անցյալում՝ ավետավոր հիշատակումների հետ  
Պատկերավոր օրինակներով ասացիր դու մեզ.  
«Դարձեք դուք ինձ, և ես ձեզ պիտի դառնամ»,  
Կամ՝ «Երբ կդառնաս ու կհառաչես, այնժամ դու<sup>1</sup>  
կապրես»:

Եվ կամ թե՝ «Աղջամուղի սկությունը դու<sup>2</sup>  
կփոխարկես ձյան պայծառության,  
Եվ արյամբ ներկված մարդկանց դու կդարձնես  
գեղմի պես մաքուր», ըստ Եսայու և  
Զաքարիայի,  
Թե՝ բարկությանդ մեջ ողորմությունդ էլ ես  
մտաքերում.  
Թե՝ հսրայելի քաղաքները անապատանան պիտի  
Եվ ապա դարձյալ դառնան բնակելի.  
Թե՝ ճանապարհները պիտի ամայանան առ ի  
չգոյե մարդկանց.  
Եվ ապա դարձյալ դառնան բանուկ.  
Թե՝ պիտի թուլանան ոգու սովոր և քո ձեռքով  
դարձյալ զորանան.  
Թե՝ Աստված զայրագին իր տեղը պիտի գնա  
Եվ պիտի դառնա դարձյալ ողորմությամբ.  
Կթողնի նա մեզ՝ բայց և՛ կների,  
Կսաստի թեև ու կսպառնա, բայց և՛ կրկին  
կպաշտպանի.  
Եվ մինչ խոռվահույզ է սիրտը նրա՝ կշարժվի  
դութն իր խնամքների:

### 3

Эти достохвалъные гласы профоков,  
Что предвозвестили благодать  
освобождающего прицестия Твоего -  
Меру коего нельзя измерить словами  
вещественного языка,  
Поемику необъятно оно, -  
Суть лишь ничтожные и тусклые образы  
И подобия древние и преходящие  
В сравнении с благовестующим Твоим  
явлением  
И искуплением чрез распятие Твое.  
И воистину, воздвиг Ты повсюду  
Алтари мученической крови Твоего завета,  
Кои вопиют всегда громче, нежели жалоба об  
убиении Авея,  
О благодатной победе Твоих Страстей,  
О жизни второй и вечной, [дафуемой] бла-  
гостынями Твоими:  
Крещением, воскрешением, обновлением,  
Сородственностью Тебе, слиянием с духом  
Твоим святым,  
Искуплением, освобождением, просвещением и  
чистотой вечной,  
Блаженством истинным, приобщением к  
вышиним, славою неотъемлемой,  
Гласом молитvenных слов примирения,  
[Возносимых] устами нашими ко Всевышнему,  
И, о чём даже говорить стфаино,  
В напамятование о Твоей милости великой,

### 4

Մարգարեների խոսքերն այս խնկելի,  
Որոնք քո օրհնյալ գալստյան հրամանն էին  
ազդարարում առաջուց,  
Եվ որ հնար չէ նյութեղեն լեզվով բոլորը թվել,  
քանզի անբավ են,  
Օրինակներ են, նմանություններ նվազ, փոքր ու  
հին, ժամանակավոր՝  
Քո ավետավոր հայտնության և խաչիդ  
փրկագործության համեմատությամբ:  
Դու ամենուրեք կառուցեցիր խորաններ՝ քո  
արյան ուխտի վկայության,  
Որոնք մեծաբարբառ աղաղակում են միշտ՝  
Աբելի մահվան դատակնիքից ավելի  
բարձրաձայն հռչակելով,  
Հաղթանակը բարի պատերազմիդ  
Հանուն երկրորդ և անմահ կյանքի շնորհների՝  
Մկրտության, հարության, նորոգության,  
Ընտանության քեզ հետ և քո Սուրբ Հոգու  
միավորության,  
Քավության, ազատության, լուսավորության,  
Մշտնչենավոր մաքրության և ձմարիտ  
երանության,  
Վերնայինների հետ կցորդության, անկապուտ  
փառքի,  
Եվ մեր շուրթերի բարձրյալին ուղղած  
աղաչողական հաշտարար խոսքի:  
Եվ այն, ինչ ասելն իսկ ահավոր է,  
Գրում եմ այստեղ ես ի հիշատակ մեծ երախտիքիդ.

Пишу здесь, что избранием благодати мы  
 можем даже уподобиться Богу  
 И соединиться с телом Тебя Сотворившего  
 Чрез вкушение Твоего Тела Господнего  
 И слияние со светом жизни Твоей.  
 Столъ совершенного и блаженного обетования,  
 Как речет Павел, нет в [Ветхом] Завете.  
 Но ты, Спаситель, придя с богатствами  
 Твоего Отца,  
 Осуществил и воплотил упование неоскудное,  
 Кое долго на Тебя возлагали, о Искупитель  
 всех!  
 И Тебе с Отцом Твоим слава во хвалу и  
 величание Твоего Духа Святого. Аминь!

Կարող ենք լինել մենք աստված նույնիսկ՝  
 շնորհներով ընտիր  
 եվ ստեղծողիդ հետ միանալ՝  
 Տերունի մարմինդ ճաշակելով և խառնվելով  
 կենաց լույսիդ հետ,  
 Մինչ ըստ Պողոսի՝ չուներ հին օրենքն այսպես  
 կատարյալ երջանիկ խոստում:  
 Իսկ դու, փրկություն, քավիչ բոլորի, եկար  
 հայրենի քո հարստությամբ  
 եվ մեր հույսն առ քեզ անկրծատելի՝ արիր  
 հարատե կատարելապես:  
 Փա՛ռք քեզ Հորդ հետ՝ ի գովք Սուրբ Հոգուդ  
 բարեբանության,  
 Հավիտյանս հավիտենից. ամեն:

## Глава 24

### Слово к Богу из глубин сердца

1

**У**днесь, что заслужил я, с какою мольбою  
Мне предстать [пред Тобою]?  
[Просить ли] царствия небесного,  
От коего я уклонился?  
Или благоления славы Твоей,  
Коего я лишился?  
Или же жизни бессмертной,  
От коей был я отринут?  
Или же общения с ангелами,  
С коими был разлучен я?  
Или причисления к праведным,  
От коих был я оторван?  
Стать ли живой лозой виноградной,  
От коей был отсечен я?  
[Стать ли] сучком на древе услады,  
На коем засох я?  
Или же цветком славы благодатной,  
С коей я, [словно лепесток], опал?  
Или [стать мне] наследником величия,  
Под [тяжестью] коего я согнулся?  
Или просить родственных обятий Отчих,  
Из коих я был исторгнут?

2

Гордиться ль мне облачением из света,  
Кое спало с меня?  
Уповать ли мне на возвращение к Создателю,

ԲԱՆԻ ԻԴ  
ԱՐՁԻ ԽՈՐՔԵՐԵՑ ԽՈՍՔ ԱԼՏՈՒ ՀԵՅ

Ա

**Ե**ւարդ, ի՞նչ բաների արժանի համարելով  
ինքս ինձ, մոտենամ ես քեզ աղերսելու,  
Արքայության, որից վրիպեցի,  
Թե՞ վայելուչ փառքիդ, որից զրկվեցի,  
Թե՞ անմահ կյանքիդ, որից վտարվեցի,  
Թե՞ պարակցությանը հրեշտակների, որից  
տրոհվեցի,  
Թե՞ արդարների մասնակցությանը, որից ջոկվեցի,  
Թե՞ ուռն լինելու կենդանի որթի, որից պոկվեցի,  
Թե՞ ստորերկության ծառի, որից գոսացա,  
Թե՞ ծաղկիը փառքի շնորհի, որից թափվեցի,  
Թե՞ ժառանգավորն պանծանաց, որից կորացա,  
Թե՞ հայրական հարազատ գրկին, որից դուրս  
ընկա:

Բ

**Հ**ուսեղեն զգեստով՝ պարձենամ,  
որից մերկացա,  
Թե՞ ստացողի դարձին հուսամ ես, որից  
խորթացա,  
Ըղձալի լույսին դիմեմ ես արդյոք,  
որից մեկնեցի,  
Թե՞ սկզբներին հոդվեմ Հիսուսի,  
որից մերժվեցի,  
Նրա թևերին մոտենամ, որից օտարացա,

От коего был я отчужден?  
 Обратиться ль мне к вожделенному Свету,  
 От коего я отдалился?  
 Иль приобщитъся мне к костям Иисуса,  
 Коими я был отвергнут?  
 Или ж к рукам того подойти мне,  
 Коему стал я чужим?  
 Искать ли прибежища мне в уповании,  
 От коего я отвратился?  
 Или - в Спасительном возрождении,  
 Для коего я уже умер?  
 Иль [уповать мне] на бодрость бдения,  
 Что покинула меня?  
 Иль на канон обетования жизни,  
 От коего я отклонился?  
 Или на незыблемые установления,  
 От коих я совратился?  
 Иль на твердость утеса недвижного,  
 От коего я отшатнулся?  
 Иль [прочистить себя] к сонму [пречистых],  
 Из коего я выбыл?  
 Быть сотворенным мне в городе первенцев,  
 Откуда был угнан я в плен?  
 Или молиться мне о хлебе насущном,  
 Коего [еще] я не заслужил?  
 Попросить ли о прекращении страданий,  
 Из-за коих я пота не пролил?  
 Быть ли увенчанным мне наградами,  
 Коих я не удостоен?  
 Быть ли мне внесенным в книгу жизни,

Թե՞ ապավենին ապաստանեմ ես,  
 որից զատվեցի,  
 Նորոգությա՞նը հուսամ փրկարար, որից  
  մահացա,  
 Թե՞ զվարթարար զգաստությանը,  
 որից լքվեցի,  
 Կամ ուխտադրական կենաց կանոնին, որից  
  փոխվեցի,  
 Թե՞ հաստատական օրինադրության, որից  
  սահեցի,  
 Անշարժ, անսասան Վեմի՞ն կառչեմ ես, որից  
  սասանեցի,  
 Թե՞ սրբոց գնդին լինեմ դասակից, որոնցից ինքս  
  ինձ ի դուրս մղեցի,  
 Անդրանիկների քաղաքո՞ւմ շինվեմ, որից ես  
  գերի քշվեցի,  
 Թե՞ ամենօրյա հացին աղոթեմ,  
  որ չվաստակեցի,  
 Թե՞ տաժանքների վերացումն խնդրեմ, որոնց  
  համար չքրտնեցի,  
 Թե՞ պարզեներով պսակվեմ ես այն, որոնց  
  արժանի չհանդիսացա  
 Կամ կենաց գրքո՞ւմ արձանագրվեմ,  
 որից ջնջվեցի,  
 Թե՞ երախտիքներդ հիշեմ ես արդյոք, որոնք  
  մոռացա:

Из коеи вычекнули меня?

Иль вспомнить мне милость Твоих благодеяний,  
О коих всегда я забывал?

3

И вот пресеклась, порвалась нить упования на  
жизнь.

Завладела мною мерзость проказы, весь занемог я;  
Вконец скверной охвачен, истощилась плоть моя,  
И она мертвя уж для Бога.

Белеет крохотная лиши язва, блестящая и  
гадкая,

Осталъное все сохранило прежний  
сомнительный вид,

Означает сие двойную скверну.

Блеск славы вконец угас для меня;

Спасение отступило, померкло добро;

Наглоухо закрылись пути жизни;

Утешение исчезло;

Подошел день суда;

Яд смерти разлился во мне;

Снова во мне ожило убитое;

Корабельную пристань забило камнями;

Заросла тропка надежды;

Покровы благодати с меня были сорваны;

Благоление славы померкло;

Прозорливость напутствия была отмечена;

Умножились тернии упреков;

Распустились росточки несправедливости;

Пламя геенны воспламенило меня;

Усугубился гнет неволи,

¶

Եվ ահավասիկ, ապրելու հույսի լարը կտրվեց,  
Ու վարակվեցի՝ ևս բոլորովին գարչ  
բորբոքությամբ.

Տգեղ, սպիտակ ու փոքր-ինչ փայլող  
պալարի պես այն,

Որը կրկնակի մեր անմաքրության իբրև նշանակ՝  
Նախնական ախտի սպին է պահում երկդիմի  
կերպով,

Ապականությունն ինձ պաշարելով՝ սպառեց  
մարմինն իմ բոլորովին

Պարծանքի նշույլը բոլորովին շիջավ ինձ համար,  
Փրկությունը վտանգվեց, բարին ստվերացավ,  
Կյանքի դուռն ընդմիշտ փակվեց,

Մխիթարությունը վերացավ,

Դատաստանի ատյանը մոտեցավ,

Մահվան թույնն արծարծվեց իմ մեջ,

Սպանվածն իմ մեջ կրկին կենդանացավ,  
Նախահանգիստը քարելով խցվեց,

Հույսի շավիղը կուրացավ,

Շնորհի ծածկույթն ինձանից հանվեց,

Փառքի վայելչությունն աղոտացավ,

Առաջնորդող հանճարը խափանվեց,

Կշտամբանքների փուշը շատացավ,

Անօրենության ուղելը ծաղկեց,

Գեհենի բոցը բորբոքվեց իմ դեմ,

Ծառայության լուծը սաստկացավ,

Մտրկության կապը զորացավ,

Կառույցը պահող սյունն ահա ընկավ,

*И цепи рабства окрепли.  
Вот рухнул столп, подпирающий кровлю,  
Развалилось основание вьшики,  
Расторглось единение родства,  
Был оскорблен Божий Дух, любящий святость.*

#### 4

*И поелику испил я последнюю горечь:  
Муки, терзания, печаль, скорбь душевную,  
Боль неизлечимую, смятение безысходное,  
Срам непостижимый, позор неутаимый,  
Стыдливость робкую, бегство безвозвратное,  
Гонения бесчеловечные,  
Бессильный голод долгого пути,  
То Ты - Спасение, Могущество и  
Вспоможение,  
Милосердие, Просвещение, Очищение,  
Бессмертие,  
Господь Иисус Христос, Сын Бога живого  
Создатель Небес и земли,  
Что дафуешь воду жаждущим на безводных  
пространствах пустыни.  
Благословенный, сострадательный,  
могущественный, человеколюбивый,  
Долготерпеливый, заботливый, искусный,  
попечительный,  
Бескорыстный Защитник, победоносный  
Страж и Жизнь нетленная,  
Посредник Небесный, неиссякаемое Изобилие,  
торжествующее Блаженство,*

*Բարձրության վստահարանը կործանվեց,  
Ընտանի միաբանությունն անջրպետվեց,  
Եվ տիրեց սաստիկ սրբություն սիրող  
Աստծո հոգին:*

#### Դ

*Եվ քանզի ես դառնությունների մրուրը  
ճաշակեցի,-  
Տանջանքներ, խայթեր ու տիրություններ,  
վշտեր հոգեկան,  
Ցավեր անդարմանելի և տարակույսներ  
անհուսագրելի,  
Ամոթանքներ անպարտակելի,  
խայտառակություններ անծածկելի,  
Պատկառություններ անհամարժակական,  
փախուստներ անդառնալի  
Եվ հալածանքներ անմարդասիրելի,  
Երկար ու ձեռնունայն, անպաշար  
ուղևորություն,-  
Ուստի և դու, ո՞վ փրկություն, զորություն  
և օգնություն,  
Ողորմություն, լուսավորություն, քավություն և  
անմահություն,  
Տեր Հիսուս Քրիստոս, Որդի Կենդանի Աստծո,  
Արարիչ երկնի և երկրի,  
Որ ջուր ես տալիս ծարավներին անջուր  
անապատում,  
Օրհնյալ, բարեգութ, հզոր, մարդասեր,  
Երկայնամիտ, խնամակալ, հնարավոր, այցելու,*

Протянув с любовью десницу милосердия Своего,  
 Прими меня, многогрешного, искупившего  
 [грехи] и очистившегося,  
 И приблизь к Слову существу, к Духу, читому  
 наравне с Тобой,  
 Дабы снова Он, примиленный Тобой, вернулся в  
 меня.  
 И через Тебя я, жертвованный Отцу,  
 [Чтоб] могущественным существом Его  
 И целомудренной волею Его  
 Тут же перед Ним, связанный навек  
 Дыханием привета с благостью Твоей,  
 С Тобою слился нерасторжимо.  
 За это Тебе, Отцу Твоему вместе  
 с Духом Святым -  
 Троице! в одном Естестве, в Божестве одном  
 Слава и хвала всех тварей живых,  
 Благословение во веки веков.  
 Аминь!



Պաշտպան աննախանձ, պահապան հաղթող և  
 կյանք անկորուստ,  
 Միջնորդ երկնային, լիություն անվագ,  
 երանություն տոնելի,  
 Քո ողբության աջ ձեռքը սիրով երկարելով ինձ՝  
 Ընդունի՛ր և ներկայացրու քավված և սրբված  
 ամենապարտիս՝  
 Քեզ հավասարապատիվ Հոգուն, ո՞վ կենդանի  
 Բան,  
 Որպեսզի քեզնով հաշտված վերստին՝ իմ մեջ  
 դառնա նա:  
 Եվ քո միջոցով նա, որ զորեղ է ինքնությամբ  
 իր մաքուր կամքով ինձ սրբադորձած՝  
 Հորդ ընծայելով՝  
 Միաժամանակ ամբողջ իմ շնչով անբաժանորեն  
 Կապի, միացնի բարեշնորհիդ հետ:  
 Որի համար՝ քեզ, Հորդ ու Սուրբ Հոգուդ՝  
 Երրյակ Անձնավորությանդ՝ մի բնությամբ  
 և մի աստվածությամբ ~  
 Փա՛ռք և բովանդակ արարածներից  
 գոհաբանություն  
 Հավիտյանս Հավիտենից. ամեն:



## Глава 66 Слово к Богу из глубин сердца

1

*Д*несъ, если примет кто, [как] снадобье,  
мольбу,  
Молясь по сей книге смиренной -  
Коль молящийся будет из грешников, -  
Я с речью своей присоединюсь к нему;  
Коль стенающий будет праведник -  
Вместе с ним за [молитву] сию буду прощен  
ради него и я.  
Коли ж таковой сам себя счастливым сочтет,  
Оставив сепования мне лишь одному, -  
О себе я стану утверждать то же самое.  
Но пусть вспомнит он Соломона и слова его  
вдохновенные,  
Мол: "Кто может сказать, что сердце чистое  
у него,  
Либо кто может гордиться тем, что чист от  
грехов",  
Ибо не вознесся [еще] человек земнородный,  
Кто был бы болен не держать ответ;  
И не [было еще] бегуна проворного,  
Кто в беге надеялся бы на себя одного;  
Даже если были бы в полете у него крылья  
моцные,  
Пусть бережется и дважды боится, как  
поучает Павел;  
Кто утвердился уже на камне,

ԲԱՆ ԿԶ  
ԱՐՁԻ ԽՈՐՔԵՐԵՑ ԽՈԱՔ ԱԱԾՈՒ ՀԵՑ

**Ա**րդ, ով որ առնի այս համեստ մատյանի  
մաղթանքների սպեղանին,  
Նրանով աղոթելու համար, եթե այդպիսին  
մեղավոր է մի՝  
Ե՛ս Էլ թող նրան մասնակից լինեմ իմ այս  
խոսքերով.  
Իսկ եթե երբեք լինի ոմն արդար այր աղոթարկու,  
Ես Էլ նրա հետ թող այս մատյանով գտնեմ  
գթություն:  
Եվ ապա, եթե այդպիսին իրեն զգա երջանիկ,  
ինձ համարելով միայն եղկելի,  
Այդ նույնը նաև հաստատում եմ Ե՛ս,  
Բայց նա Էլ հիշի թող Սողոմոնին և այս  
հոգեշունչ խոսքերը նրա,-  
«Ո՞վ վստահորեն կարող է ասել, թե ունի սուրբ  
սիրտ,  
Եվ կամ պարծենալ, թե մաքուր է մեղքերից».  
Եվ թե՝ «Չի եղել երկրածին մի մարդ՝ զերծ իրեն  
համար պատասխան տալուց».  
Ինչպես և ոչ ոք՝ հաղթող համարված՝  
ինքնարշավ վազքով,  
Եթե մինչև իսկ ունենա թերե նա բարձրաթոփիչ:  
Ուստի նաև նա՛ թող զգուշանա, երկյուղ կրելով,  
Որ հաստատ վեմի վրա է նույնիսկ,  
Պողոսից ուսած.

Как бы на землю ему не упасть,  
 Подобно [законодавцу], установившему  
 Справедливое это правило.  
 Пусть праведник примет укоризну сию  
 Как средство, коим увенчается,  
 Дабы не сойти необдуманно с высот  
     недосягаемых;  
 Осужденный же на кафу - как повод к свободе,  
 К кой, вознесшись от погибели смерти  
     духовной,  
 Надежно станет он жить!  
 Пусть будут навеки памятником мне  
 Неистребимо высеченные заветы сии.  
 И будут они, не переставая, за меня, бедного,  
 За душу смертную немолчно звучать,  
 Горестным плачем, не переставая, вечно  
     вопиять.  
 Мои сокрушенные кости в плащанице из плаха  
     в могиле  
 Пусть безмолвным шепотом исповедуются  
     в том же.  
 Дай плоти моей, в земле растворенной,  
     голосом тем же неслышанным  
 Тебя, тайновидца, о том же просить.

## 2

Господь сострадания, Родник милосердия и  
     Даритель благ,  
 Сын Всеяшишего, Господь Иисус Христос,  
     Смилился, сжалъся, возлюби,

Որպեսզի միգուցե գետին ընկնելով՝  
 Նմանվի այս իրավադատ կանոնը սահմանողին:  
 Այլ նույնիսկ և նա՛, որ մաքուր է, թող այս  
     կշտամբանքը դաս անի իրեն,  
 Զիջնելու համար անխոհեմ կերպով իր  
     բարձրությունից.  
 Իսկ պատժապարտն էլ թող ընդունի այն՝ առիթ  
     ազատության:  
 Որով հոգեկոր մահվան կործանումից վեր  
     բարձրանալով՝ ապրի լիահույս:  
 Իսկ ինձ համար այս պատգամները թող լինեն  
     փորագրված արձանագրություն հավերժ  
     անեղծանելի,  
 Որ իմ եղկելի և մահկանացու անձի փոխարեն՝  
 Հեծության, լացի անդադար հնչմամբ, առանց  
     լուելու միշտ աղաղակի:  
 Եվ թող որ լինի, որ բեկեկված ոսկորներս  
     հողապատյան շիրմի ծածկութի տակ  
 Անմոռնչ ձայնով՝ խոստովանական այս  
     աղոթքներս եղանակեն.  
 Ինչպես և հողում լուծված մարմինս անլուր  
     բարբառով  
 Այս պաղատանքներս թող որ առաքի քեզ՝  
     ծածկատեսիդ:

## ػ

Տե՛ր գթությանց, աղբյուր ողորմությանց,  
     պարգևաբաշխ բարի,  
 Որդիդ բարձրյալի Տե՛ր Հիսուս Քրիստոս,  
 Ողորմի՛ր, խնայիր, մարդասիրիր,

Посмотри на горе мое,  
 Брось взгляд на крушение [сердца] моего,  
 Снизойди к беде моей,  
 Узри смятение бессильного отчаяния моего,  
 Помоги гибели предать пороки [мои],  
 Прикоснись, как целитель, к злополучным  
     недугам моим,  
 Приклони с ласкою ухо к жалостному плачу  
     моему,  
 Услышь немые стоны мои из бездны глубокой  
     смертной могилы,  
 Ушами - весельшающим орудием слуха - услышь  
 Глас мольбы изнуренной плоти моей.  
 И коль [душа] - залог жизни - нетленна,  
 Да будет милосердие любви Твоей неизменно.  
 Будь кротко соучастником [мне],  
     изможденному немощью.

### 3

К лицу моему мертвому вражды не питай,  
 С бездыханным образом моим не вступай в  
     тяжбу разбора,  
 Не прибавляй ударов мне, измученному смертью,  
 Со [мной], разбитым сосудом глиняным, не  
     сражайся Ты беспощадно,  
 На меня, удрученного приговором [смерти], не  
     гневайся боле  
 Меня, разрушенное здание, не предавай  
     наказанию,  
 Меня, иса умерщвленного, не забрасывай  
     камнями,

Նայիր վշտերիս և տե՛ս սրտաբեկությունս,  
 Խոնարհվի՛ր թշվառությանս վրա,  
 Տե՛ս տարակուսական տագնապս անձեռնհաս,  
 Կարեկից եղիր ի կորուստ տանող ցավերիս մեջ ինձ,  
 Շոշափի՛ր բժշկապես վերքերն իմ թշվառագույն,  
 Ականջ դիր քաղցրությամբ ողորմագին  
     հեծենանքներիս,  
 Լսի՛ր գերեզմանի խորունկ անդունդից հնչող  
     անմռունչ հառաջանքներս,  
 Թող քո ամենալուր ականջներից ներս մտնի:  
 Հյուծված անդամներիս ձայնը պաղատագին:  
 Եվ քանզի անապական է կենդանությանս  
     գրավական հոգին,  
 Ուստի թող անփոփոխ լինի սիրույդ գթությունը  
     նաև,  
 Կցորդ եղիր դու հեզությամբ՝ տկարությանն իմ  
     տաժանելի:

### 4

Մեռյալ պատկերիս դեմ ոխ մի՛ պահիր,  
 Անշունչ կերպարանքիս հետ մի՛ մտնի  
     դատաքննության,  
 Մահով տանջվածիս դու նոր հարվածներ մի՛  
     ավելացնի,  
 Կոտրված խեցեղեն անոթիս հետ մի՛ մարտնչիր  
     ուժգնությամբ,  
 Վճռով խոշտանգվածիս վրա մի՛ բարկանա կրկին,  
 Կործանված շինվածքիս մի՛ տար նոր պատուհաս,  
 Սպանված շանս վրա քարեր մի՛ արձակիր,

На меня, блоху раздавленную, не греми [так]  
грозно,  
На меня, пух опороченный, не рви громко,  
как на надменного.  
Меня, золу презренную, не призываи Ты на суд  
избранных,  
Во мне, пыли рассеиваемой, не ищи противника  
Себе,  
Меня, тину гадкую, не суди, как врага  
[Своего],  
Меня, мерзость гнусную, не толкай, как  
кулачного бойца,  
Меня, ограду истлевшую, не береги, как долю  
гееинны,  
Меня, осужденного всем множеством слов, не  
порицай снова.

#### 4

Вот они, горестные, многоскорбные мольбы,  
Вознесенные из злополучной трачной могилы;  
Подтверди благословенное слово Твое,  
Что неизменным пребуду всегда по сердцу  
доброму,  
Ибо и ныне, пока я живой и говорю [с Тобой],  
Я мертв для Тебя, Непостижимого;  
Так же, умерев насильтвенной смертью,  
По воле Твоей, Всемогущий,  
Пребуду верою своей я неизменен.  
Ныне умоляю Тебя, милосердно взгляни на меня,  
Господь Иисус Христос,

Ճախջախված լվիս վրա մի՛ որոտա սաստկապես,  
Անարդ հողիս դեմ իբր անբարհավաճի՛ մի՛  
մռնչա ուժգին,  
Մոխրիս մերժելի մի՛ կանչիր դատաստանի  
քննության,  
Յնդելի փոշուս մի՛ համարիր դու քեզ  
ընդդիմամարտ,  
Տիղմս տաղտկալի մի՛ կարծիր դու քեզ  
որպես ոսոխ,  
Գարշությանս անգոսնելի մի՛ վանիր իբրև  
բռնամարտիկի,  
Դուրս շպրտվելիք կոճղիս մի՛ պահիր գեհենի  
համար որպես վառելիք,  
Այսքան խոսքերով բազմաթիվ անգամ  
կշտամբվածիս  
Դու էլ վերստին մի՛ հանդիմանիր:

#### Դ

Սրանք են ահա այն սրտաբեկիչ ու  
հոգնաթախիծ աղաչանքները,  
Որոնք իմ թշվառ ու խավարգել շիրմից  
պիտ հնչեն.  
Եվ թող քո օրհնյալ խոսքը հաստատի,  
թե աղոթողիս սրտի համաձայն  
Պիտի մնամ ես անայլայլելի:  
Քանզի հիմա էլ, մինչդեռ խոսում եմ  
դեռևս կենդանի՝  
Մեռած եմ արդեն անհասիդ համար.  
Ինչպես և մահվամբ կոչելիս անգամ

И не допусти, чтобы жил я вместе с  
Велиаром.  
Благодетель единственный, Душеспаситель,  
Могущественный, человеколюбивый,  
Громкое оповещение неживое, несущее смерти  
нагубную весть  
О погребении горестном, соблаговоли Ты  
услышать,  
Подобно шуму голосов, стенающих и плачущих,  
Тебя умиштвоящих,  
И дух Твой благий посели со мной,  
Даря мя свет [Свой] во тьме.  
Животворящих Твоих Страстей обожаемые  
частицы  
Да пребудут со мною,  
Чтобы охранять мя, [держатъ] при Тебе,  
как залог сокровищ,  
И даровать мя обновление жизни,  
Чтоб принадлежать мя как неиссякаемый  
запас оружия;  
Вечно быть при мя, как камни пращи,  
Как духовные средства для изгнания полчищ  
сатаны.  
Битву [сатаны] против мя, Господи, пусты  
выиграешь Ты,  
Ибо, если он выйдет воевать со мной, -  
Город найдет он свободным от войск  
И рог воинственный - безмолвствующим,  
Ты же, Господи, защита мя неусыпная, вечная.

Անեղծ կմնամ ես իմ հավատքով, ըստ հրամանի  
ամենազորիդ:  
Արդ, աղաչում եմ, Տեր Հիսուս Քրիստոս,  
ողորմությամբ նայիր դու ինձ  
եվ մի՛ թողնի, որ բնակակից լինեմ Բելիարին:  
Թշվառիս թաղման ժամանակ, տապանի  
անկենդանական թնդյունը մահագեկույց,  
Որպես աղաղակ լալահառաչ՝  
քեզ ինձ հետ հաշտեցնող,  
Արժանացրու քո լսողությանը, միա՛կ բարեգործ,  
Հոգեսեր, հզոր և մի՛շտ մարդասեր.  
Եվ քո բարի հոգին թող բնակվի ինձ հետ, լույս  
տալով ինձ խափարի մեջ,  
Թող մնան ինձ հետ քո կենարար  
չարչարանքների մասունքները պաշտելի,  
Որպեսզի, իբրև գանձարանի ավանդ, պահելով  
ինձ քո մեջ, կենսանորոգեն.  
Որպես զինվորական սարք անվատնելի թող  
պատկանեն ինձ  
Ու մնան ինձ հետ իբրև մնայուն պարսաքարեր՝  
հոգու հնարքների,  
Զարի գնդերը հալածելու համար:  
Նրա՝ իմ դեմ մղած մարտը թո՛ղ քեզանով  
վանվի, Տե՛ր,  
Զի եթե նա ենի իմ դեմ պատերազմելու,  
Տեսնելով քաղաքն առանց զինվորի և  
ազդարարող գործիքը անձայն,  
Քե՛զ կունենամ, Տե՛ր, անքուն պահապան  
մշտնջենապես:

## 5

Коли уж ныне, до Судного Дня, [дьявол]  
поспешит  
Уготовить мне узилище неодолимое,  
Я сотворю молитву Господнюю -  
Ему она будет как смерти удар.  
Коли замыслит опрокинуть меня долу -  
Я паду на колени пред Создателем.  
Коли задумает вывалаять меня в плахе земном -  
Пусть отринет его том же [плах], налитий  
на Божье лицо.  
Коли причинит боль тяжкую мне  
вознамерится он -  
Пусть истомит его пот, смешанный с кровью,  
По лицу Спасителя мифа обильно текущий.  
Если заложит на путь к добру он душу мою.  
Пусть вызволят меня путы Всесоздателя.  
Коль отступиться от даров света вынудит  
меня [сатана] -  
Долготерпение [Христа] против браны  
хулителей  
Пусть заставит умолкнуть и его вместе с  
ними.  
Коль выпустит в меня стрелу смертоносную  
из оружия тайного -  
Пусть настигнет его заостренный конец  
Стрелы из колчана [Небесного] Отца.  
Коль с темною [целью] под покровом света  
Захочет он нагло склонить к дурному -  
Пусть его доконают удары,

## Ե

Զի եթե շտապի չարն այժմ ևեթ, առաջ քան օրը  
կատարածի,  
Եվ պատրաստի ինձ համար անելանելի  
արգելարան,  
Ես տերունական աղոթքն իմ կուղղեմ նրա դեմ,  
որպես մահացու հարված.  
Եթե կարենա ինձ գցել գետին,  
Արարշին արած իմ ծնրադրությամբ նրան  
կիսոցեմ.  
Եթե հաջողի երկրի մոխրի մեջ գլորել նա ինձ,  
Աստծո երեսնիվայր ընկնելը թող հալածի նրան.  
Եթե տանջալից ցավեր նյութե ինձ,  
Աշխարհի փրկչի քրտինքը առատ արյամբ  
շաղախսած՝ թող նեղի նրան.  
Եթե շունչս նա պատանդ վերցնի, որպեսզի բարի  
ճամփով չընթանամ՝  
Ամենաստեղծի կապանքը թող ինձ ազատ  
արձակի.  
Եթե բռնադատի ինձ ուրանալու լույսի  
պարգևները,  
Համբերությունն՝ աստվածամարտների  
հայՀոյության դեմ՝  
Թող որ նրան էլ նրանց հետ մեկտեղ  
պապանձեցնի.  
Եթե գաղտնապես հարված հասցնող զենքերի  
նետեր արձակի վրաս,  
Կապարձների հոր շքեղ աղեղի խոցող պաքը  
թող դիպչի նրան.

Что нанесли Всесоздателю в ризой покрытую голову.  
 Коли дерзнет он воспрепятствовать твердости рук моих,  
 Посох, что вложен был в десницу Создателя, -  
 Пусть, замучив его, заставит замолкнуть.  
 Коль, насмехаясь, пренебрежительно станет ноносить он меня,  
 То, как сносил Всемогущий глумление, - пусть насмеется над ним.  
 Коль талисманом или какой-либо ладанкой станет вокруг меня колдовать -  
 Всесильному Богу нанесенная пощечина пусть жестоко его пристыдит.  
 Коль с наступлением темени ночи в мрачном коварстве дерзнет он на бой -  
 Пусть явление Твое в сиянии света предаст,  
 [о] Боже, позору его.  
 Коли, искушая полуденным зноем и суховеем, иссушенным солнцем,  
 С корнем вырвать он пожелает меня,  
 Да засохнет [вконец] он, сломленный силою света Креста Твоего!  
 Коли задумает лишить благодати, данной мне Духом Святым,  
 Плевок, полученный за меня, грешника, херувимов Владыкой,  
 Пусть же его укорит!

Եթե խավարած լույսի շղարշով անամոթաբար  
 աչքիս մեջ մտնի,  
 Ամենակատարյալի ծածկված գլխի  
     կռվահարումը թող տանջի նրան.  
 Եթե մոլեզնի ձեռքիս վստահությունը  
     կաշկանդել,  
 Թող ստեղծողի ձեռքը տրված եղեգնը  
     չարչարելով նրան լուցնի.  
 Եթե անամոթ ծաղր ու ծիծաղով ինձ հետ  
     կատակի,  
 Ամենազորի՝ ծաղրանք տանելը թող հեգնի նրան.  
 Եթե պես-պես հուռութքների բժիշկով  
     խորամանկի,  
 Հզոր Աստծո երեսին տրված ապտակը նրան  
     ամաչեցնի թող.  
 Եթե գիշերված մութը իջնելիս խաբեռության  
     խավարով կռվի լկտիաբար,  
 Տե՛ր, լույսիդ պայծառ ճառագայթման հետ՝ թող  
     խայտառակվի.  
 Եթե հավակնի, թե կկարենա փորձությունների  
     արեգակնակեզ  
 Վատնիչ խորշակի կեսօրվա տապով ինձ  
     բոլորովին արմատից խախտել,  
 Թող քո լուսեղեն նշանի զորությամբ  
     արմատախիլ՝ չորանա.  
 Եթե փորձի նա փչումով տրված շնորհից ինձ զրկել,  
 Այն թուքը, որ մեղավորիս փոխարեն  
     քերովքեների Տերն ընդունեց,  
 Թող ամոթահար անի նրան:

## 6

Коли покажет он мне клыки разящие -  
Пусть же [тогда] заставит его смолкнуть  
Всевышнего уст немота.  
Коли душу изъязвит мне уколами мелкими -  
Пусть пронзят его гвозди, прокнувшие  
Создателя всех.  
Коли склонит меня на путь нечестивых  
намерений -  
Пусть свяжут его гвозди с ног Непостижимого.  
Коли опьянит он меня лестью жестокою -  
Пусть желчь и уксус в питье Благодатного  
горечью исполнят его.  
Коли поймет у дерева [Познания] меня за  
вкушением первых [плодов] -  
Пусть же захваченный грозным таинством  
Креста  
Будет на веки вечные он осужден.  
Коли будет учить меня бунтовать против  
воли Господней -  
Пусть его сгубит беспредельного [Бога] шея  
склоненная.  
Если, толкая на смертную гибель, он [тяжко]  
ранит меня -  
Пусть пронзит его острия пика -  
Оружье, прокнувшее Творца Адамова в бок.  
Коли муками горестей адских [колыцом]  
окружит он меня -  
Пусть холст савана Вседержителя тварей  
захватит его самого.

## Ω

Եթե կծոտող ժանիքներ ցույց տա ինձ,  
Երկնավորի բերանի լուսթյունը թող նրան  
պապանձեցնի.  
Եթե ցանկական խայթվածքներ պատճառի հոգուս,  
Ամենաստեղծին զարնված բևեռները նրան  
կսկծեցնե՞ն թող.  
Եթե անիրավ խորհուրդների ճանապարհով ինձ  
մոլորեցնի,  
Անհասանելու ոտքի մեխերը թող նրան կապեն.  
Եթե հարբեցնի ինձ դժմաբարո հրապույրներով,  
թող բարերարին արված լեղիով խառնված  
քացախը նրան դառնացնի.  
Եթե ծառի առաջին պտղի ճաշակման մեջ գտնի  
ինձ,  
Խաչի սոսկալի խորհուրդով բռնված՝ թող  
իսպա՛ռ դատապարտվի.  
Եթե Տիրոջ հրամանին հնազանդվելու դեմ  
ընդվել սովորեցնի ինձ,  
Անսահմանելու պարանոցի բերումն թող  
կործանի նրան.  
Թե սատակամահ անելու համար հալածի նա ինձ  
և վիրավորի,  
Աղամին ստեղծողի կողքը միսված ահագին տեղը  
թո՛ղ պատուի նրան.  
Եթե դժոխային վշտերի երկունքներով պաշարի  
նա ինձ,  
Ամենակալի պատանքի կտավը թող կաշկանդի  
նրան.

Коли коварно заставит меня на дно смерти  
взглянуть -  
Пусть умертвит его обитание в смертной  
скале [Бога] живого.  
Коли смеяться начнет, мол, [подвержен] я  
людским соблазнам,-  
Пусть снова согнется он с волею сломленной,  
Когда Бог бессмертный,  
воскреснув со славой,  
Оживит с собою и умерших всех.  
Коль возрадуется [лукавый], освободившиесь  
от малых пут тысячелетних -  
Пусть тут же опять затрепещет он,  
[Помня] цепи грядущие беды неминучей,  
Ужасного плена, мук бесконечных.  
Коль снести будет трудно ему удар перввой -  
Пусть подадут ему вести плачевые  
О конечной гибели в негасимой геенне,  
Что уготована и ему, и ангелам его  
В великий день Великого Суда.

## 7

А я, Господи Иисусе, на Тебя уповаю,  
Царь единый, Вседержитель могучий,  
Создатель Небес и земли и всех украшений на  
них;  
В ожидании пришествия Твоего и милосердия  
Твоего, о Спаситель,  
В надежде пропадаю к стопам Твоим и  
лобызаю следы пят Твоих,

Թե խարդախությամբ փորձի ինձ մահվան  
հատակը ձգել,  
Մահվան վեմի մեջ կենդանի Աստծո բնակվելը  
թող նրան մեռցնի.  
Եթե մարդկային իմ գայթակղության վրա նա  
խնդա,  
Թող կարկամ կամքով կորանա կրկին.  
Զի Աստվածն անմահ հարության փառքով՝  
Բոլոր մեռելներին նորոգեց իր հետ:  
Թե հազարամյա փոքր կապանքի լուծումով բերկրի,  
Բայց թող որ իսկույն դողա վերստին  
Անվերջ-անվախճան տանջարանի մեջ սաստիկ  
կաշկանդող հուսկ շղթաների անզերծ  
տագնապից  
Եթե առաջին իսկ հարվածի հետ նա դժվարանա,  
Մեծ դատաստանի մեծ օրը ահեղ, կորստյան  
գույքը թող տրվի նրան՝  
Նրա և իր հրեշտակների համար պատրաստված  
անշեղ գեհենով:

## Է

Իսկ ինձ, որ քեզ եմ ապավինել, Տե՛ր Հիսուս,  
Միակ թագավոր, ինքնակալ, զորեղ, արարիչ  
երկնի և երկրի,  
Եվ նրանց մեջ եղած բոլոր զարդերի,  
Ինձ, որ աչքս քո գալստյանն եմ հառել  
Եվ փրկչիդ ողորմությանն եմ սպասում հույսով,  
Քո ոտքն եմ ընկնում և համբուրում եմ  
հետքերը գարշապարիդ,

Признаюсь в поражении своем и грехи свои  
     открываю,  
 Камнями упреков забрасываю себя и от стонов  
     сердца [весь] пылаю я.  
 Угрызениями совести весь я изъязвлен, в  
     пламени дыхания своего я горю.  
 Горькая роса слез моих жжет, действие почек  
     меня иссушает,  
 От ветра отчаяния я засыхаю, от сухового  
     вихря я угасаю,  
 От неотступных прошений я беспокоюсь, от  
     скорбных стенаний [весь] я дрожу,  
 От тяжких страстей изнемогаю, от печали  
     душевной в волнении я,  
 Рыданья вьюги вздывают мне грудь,  
     столкновение волн меня сотрясает,  
 Трепещу я, слыша мольбу, помня ужас  
     [грядущий] - я погибаю.  
 Представляя Судилище, я сохну  
 И умираю от угроз Твоих, о Великий!  
 Выслушай, Многожалостливый, Очищающий,  
 Человекомобивый, Долготерпеливый,  
 Сладость неизреченная, День добрый,  
     вожделенное Утро,  
 Ибо властен Ты во всем и можешь [да прοвратить]  
     мене  
 Спасение великое, когда дух свой я испущу.  
 И Тебе вместе с Отцом и Духом Святым  
 Слава вовеки. Аминь!

Պարտությունս եմ խոստովանում և մեղքերս  
     հրապարակում,  
 Կշտամբանքների քարերով ծեծկվում եմ և  
     սրտիս հառաջանքներով այրվում,  
 Խղճիս խայթերով խոցոտվում եմ և չնչիս բոցով  
     տոչորվում,  
 Այրվում եմ արցունքներիս աղի ցողով ու  
     երիկամներիս կակծանքով կիզվում,  
 Հուսակտուր հոգով ցամաքում եմ և  
     դառնաշունչ հողմով մարում.  
 Թախանձանքի խոսքերով երերվում եմ և  
     կողկողագին հեծությամբ դողում,  
 Տաժաննելի տանջանքներով տվայտում եմ և  
     հոգուս տագնապներով տատանվում,  
 Մրրիկների կոծով ծփում եմ և ալիքների  
     բախումից սասանվում,  
 Ի լուր համբավի սարսում եմ և վախի  
     հիշատակով՝ կորչում,  
 Ատյանի տեսարանով հալվում եմ և մեծիր  
     սպառնալիքներով մեռնում,-  
 Լսի՛ր, բազմագութ, քավիչ, մարդասեր և  
     երկայնամիտ,  
 Քաղցրություն անձառ, օր բարի և տիկ տենչալի,  
 Զի կարող ես դու ամեն ինչի մեջ,  
 Ինչպես և վերջին շունչս փչելիս ինձ  
     փրկագործել:  
 Քեզ Հոր և Սուրբ Հոգուդ հետ փա՛ռք  
     հավիտյանս. ամեն:

Глава 80  
Слово к Богу из глубин сердца

1

**Ч**ныне вот после стольких отчаянных,  
Грозных [дел] безнадежных  
И гнетущей супровости Божьего гнева,  
С тоскующей душой, вконец опечаленныи,  
Молю я Тебя, Богородица святая,  
Посланница людей, херувим с плотью [живой],  
Ты - Царица Небесная, непорочная,  
как воздух,  
Чистая, как свет, неоскверненная,  
Подобно образу утренней зари небесной,  
Вознесшаяся над скинией нетронутых  
святыни,  
Блаженное место обетования, Едем  
одушевленный,  
Древо жизни бессмертное, огражденное  
пламенным мечом,  
Усиленная и осененная Всевышним Отцом,  
Подготовленная и очищенная сошествием Духа  
[Святого],  
Украшенная и превращенная в скинию  
обитанием Сына.  
Единородный Отца, Он и Твой первенец,  
Твой Сын по рождению и Господь по  
созданию.  
Наряду с непорочной чистотой Ты безупречно  
добра,

ԲԱՆ Զ  
ԱՐՁԻ ԽՈՐՔԵՐԵՑ ԽՈՂԱՔ ԱԼՏԾՈՒ ՀԵՑ

**Վ**արդ, այսքան հուսահատությունների և  
ահարկու սրտաբեկության,  
Ահարեկիչ սաստկությամբ աստվածային  
բարկության ենթարկվելուց հետո,  
Թախծալից ոդով, իսպառ տագնապած՝  
Քեզ եմ աղաչում, սուրբ Աստվածածին,  
Հրեշտակ մարդկանց մեջ, մարմնատեսիլ  
քերովքե,  
Երկնավոր արքայուհի,  
Անխառն, ինչպես օդ, մաքուր,  
ինչպես լույս,  
Անշաղախ՝ նման բարձր արուսյակի  
պատկերին պայծառ,  
Գերազանց, քան սրբությունների բնակարան  
անկոյիսիլի,  
Խոստացված դու վայր երանավետ, եղեմ  
չնչավոր,  
Անմահ կենաց ծառ՝ բոցեղեն սրով  
պարունակված,  
Բարձրյալ Հորից զորացած և հովանավորված,  
Հանգստությամբ Հոգու պատրաստված և  
մաքրագործված,  
Բնակությամբ Որդու հարդարված և  
տաղավարված,  
Հոր համար միածին և քեզ՝ անդրանիկ,

С совершенной святостью Ты и заступница  
 попечительная,  
 Прими же мольбу и прошение мое, [моление]  
 исповедника Твоего,  
 Вознеси, подари, примешав к ним мои прежние  
 хваления Великому.  
 Переплети, соедини горькие сетования мои,  
 [сетования] грешного,  
 С Твоими блаженными, воскуряемыми ладаном  
 просыбами,  
 О древо Жизни с благословенным Плодом!  
 Ибо вспоможение и благотворение  
 всегда от Тебя,  
 И, уповая на пречистое родотворение Твое и  
 просвещаясь,  
 Жить буду я для Христа, Сына Твоего  
 и Господа.

## 2

Помоги [мне] крыльями молитв Твоих,  
 исповедуемая Мать живущих,  
 И [сделай] мой исход из юдолей  
 земных немучительных,  
 Чтоб перейти жить в обители, Тобой  
 подготовленной;  
 Сделай легкой Ты кончину мою,  
 [кончину] обремененного беззаконием,  
 Преврати Ты в праздник радости день  
 бедствия моего,  
 Ты, излечившая Еву от мук родовых.

Որդիդ՝ ծնունդով, և Տերդ՝ արարչությամբ,  
 Անալտ մաքրությանդ հետ և՝ անբիծ բարի,  
 Անարատ սրբությանդ հետ և՝ բարեխոս  
 խնամակալ,  
 Ընդունի՛ր աղոթքն այս աղերսալից քեզ  
 գավանողիս,  
 Եվ այն ընծայիր Աստծուն իբրև  
 պաղատանքը քո,  
 Խառնելով նրան՝ մեծիդ մատուցված իմ  
 պաղատալից ներբողն առաջին.  
 Հյուսիր, միացրու դառն հեծությունն իմ  
 մեղավորի  
 Քո երանելի և նվիրական խնդրվածքի հետ,  
 Կյանքի տունկդ դու օրհնված պտղի,  
 Որպեսզի քեզնից միշտ բարերարված  
 Եվ ապավինած մաքուր մայրությանդ ու  
 լուսավորված  
 Ապեմ ես Քրիստոս Որդուդ Միածին և Տիրոջդ  
 համար:

## □

Օգնի՛ր թևավոր քո աղոթքներով, ո՛վ  
 խոստովանված մայրդ ողջերի,  
 Որ երբ դուրս ելնեմ այս երկրի հովտից,  
 Առանց տանջալից չարչարանքների գնամ դեպի  
 կյանք,  
 Դեպի պատրաստված օթևաններդ:  
 Թող թեթև լինի վախճանն իմ, զի ես ծանրացել  
 եմ խիստ անօրենությամբ,

Заступись, прости, умоляй, ибо Ты неизреченно чиста.  
 И посему вот, я верую, слова твои будут приняты.  
 Помоги слезами мне, бедствующему, благословенная из жен,  
 Преклони колени, чтоб умилотворить меня, ты, родившая Бога,  
 Позаботься обо мне, обездоленном, о алтаре Всевышнего,  
 Протяни руку мне, падшему, о храм Ты небесный,  
 Восславь Ты Сына Своего, дабы Божий  
 Чудодействием Он [да]ровал мне] искупление и милость,  
 О раба Божия и Матери [Его]!

### 3

Да возрастет чрез меня слава Твоя  
 И да явится чрез Тебя спасение мое,  
 Если Ты меня найдешь, о Матерь Божия,  
 Если смилиуешься, о [Дева] Святая,  
 Если обретешь меня, потерянного,  
     о непорочная,  
 Если за пугливого, меня, заступишиесь Ты,  
     о блаженная,  
 Если пристыженного, меня, выдвинешь вперед,  
     о благодатная,  
 Если за меня, безнадежного, станешь ходатаем, о Дева присносвятая,

Օրն իմ տագնապի դարձրու ինձ համար տոն  
     ուրախության,  
 Դու, որ բուժեցիր երկունքն Եվայի:  
 Խնդրի՛ր, աղաչիր ու բարեխոսիր,  
 Զի անձառելի մաքրությանդ համար հավատում  
     եմ ես՝ խոսք կընդունի՛:  
 Արցունքով օգնիր զու վտանգվածիս, գովյա՛լդ  
     կանանց մեջ.  
 Ծնկաչոր խնդրիր հաշտությանս համար,  
     ծնո՛ղդ Աստծո.  
 Հոգատար եղիր թշվառիս հանդեպ, խորա՛ն  
     բարձրյալի.  
 Զեռք տուր ընկածիս, տաճա՛ր երկնային.  
 Եվ փառավորիր որդուդ քեզանով,  
 Որ աստվածորեն հրաշագործե ինձ ի քավություն  
     և ողորմություն,  
 Ո՞վ դու Աստծո աղախին և մայր:

### 4

Բարձրանա պիտի պատիվդ ինձանով  
 Եվ փրկությունն իմ՝ ցույց տրվի քեզնով:  
 Եթե ինձ գտնես, տիրամա՛յր,  
 Թե ինձ ողորմես, սրբուհի՛,  
 Թե կորուսայիս շահես, անարա՛տ,  
 Եթե խրտնածիս խնամարկես, երջանի՛կ,  
 Եթե ամոթահարիս առաջ տանես, բարեշնո՛րհ,  
 Եթե միջնորդես հուսահատվածիս համար,  
     մի՛շտ սուրբ կույս,  
 Եթե մերժվածիս ընտանեցնես,

Если Ты меня, отфинутого, приблизишь к  
 Себе, о возвеличенная Богом,  
 Если окажешь мне милосердие, о отметающая  
 проклятия,  
 Если Ты меня успокоишь в волнении,  
     о [вечный] покой,  
 Если отвратишь возмущение и смуту,  
     о примирительница,  
 Если заблудшего, меня, [спаси]  
     постаравшегося, о достохвальная,  
 Если за меня вступишь Ты в бой, о смерть  
     отврашающая,  
 Если уладишь Ты горечь мою,  
     о [сама] сладость,  
 Если мой разлад с самим собою уничтожишь  
     Ты, о мир,  
 Если истребишь Ты скверну мою, о  
     попирающая порчу,  
 Колъ спасешь меня, преданного смерти,  
     о свет Ты живой,  
 Если прекратишь звуки плача моего, о  
     наслаждение,  
 Колъ вновь восстановишь меня, сокрушенного,  
     о елей жизни,  
 Колъ на низвергнутого, меня, обратишь Свой  
     взор, о Божественная,  
 Если с состраданием Ты встремишь меня,  
     дарованный завет,  
 Благословенна Ты лиши устами непорочными,  
     языком счастливых,

Աստծո՛ւց մեծարված,  
 Եթե ցույց տաս ինձ գթությունդ,  
     լուծի՛չդ անեծքների,  
 Եթե տատանյալիս ամրապնդես, հանգի՛ստ,  
 Եթե հուզումներս ու խռովքներս  
     հանդարտեցնես, խաղաղարա՛ր,  
 Եթե մոլորյալիս մի ճար գտնես, գովյա՛լ,  
 Եթե ինձ համար մտնես ասպարեզ,  
     մահվա՛ն նահանջիչ,  
 Եթե դառնությունս անուշացնես,  
     քաղցրությո՛ւն,  
 Եթե բաժանման արգելքը քանդես,  
     հաշտությո՛ւն,  
 Եթե անմաքրությունս վերացնես,  
     եղծմա՛ն ընդոտնիչ,  
 Եթե փրկես ինձ մահվան մատնվածիս,  
     կենդանի՛ լույս,  
 Եթե իմ լացի ձայնը կտրես, բերկությո՛ւն,  
 Եթե խորտակվածիս կազդուրես, կյանքի՛  
     դարման,  
 Եթե կործանվածիս մի ակնարկ գցես,  
     հոգելի՛ց,  
 Եթե ողորմությամբ ինձ պատահես,  
     նվիրակա՛ն կտակ,  
 Օրհնյա՛լդ միայն երջանկալեզու անբիծ  
     շուրթերից,  
 Ահա՛ կաթիլ մի կուսությանդ կաթից  
 Մեջս անձրևելով՝ կյանք է տալիս ինձ,  
 Ո՞վ դու մայր բարձրյալ Տիրոջդ-Հիսուսի,

Одной лишь капли девственного молока Твоего  
 Довольно, чтоб, оросив меня, дать силы мне  
 жить,  
 О матерь Всевышнего Бога Иисуса, Творца  
 всей земли и Небес,  
 Неизменно родившая совершенного телом  
 И завершенного Божественностью [Своей],  
 Прославляемого вместе с Отцом и Духом  
 Святым,  
 Сущностью и неисповедимостью с нами единого.  
 Он - все и во всем, как один из Троицы,  
 Коему слава во веки веков.  
 Аминь!



Երկնի և համայն երկրի արարչի, որին ծնեցիր  
 դու անձառորեն,  
 Բովանդակ մարմնով և ամբողջովին իր  
 աստվածությամբ,  
 Որ փառավորված է Հոր և Սուրբ Հոգու հետ  
 էությամբ համակ և անքննությամբ մեր  
 բնության հետ միացած,  
 Ամենայն է նա և ամեն ինչում,  
 Երրորդությունից մեկը,  
 Նրան փա՛ռք հավիտյանս հավիտենից. ամեն:



**Глава 82**  
**Слово к Богу из глубин сердца**

1

**Г**осподи Боже, благодетельный  
Царь многощедрый,  
Прибежище жизни, Лик светозарный,  
Отдохновение полное,  
Что ради меня, грешного, явился и  
воплотился,  
Сотворил дела неизреченные, дивные  
И совершился, принял [вместе с телом  
бренным]  
Божественность завершенную.  
Днесь во имя апостолов святых, рукоположенных  
Твоей небородною дланью  
И помазанных Духом Твоим Святым,  
Коим хвалу по заслугам их и по силам моим,  
Во славу Тебе, Господь всех [живых],  
Воздал я в своем ином слове,  
Сжался надо мною во имя любви к этим  
избранным  
Или чрез них укажи мне стезю,  
Что ведет к блаженству желанному.  
Добрый пастырский глас их да слышится мне,  
Как приветствие жизни сладостной,  
И да выпадет мне в удел и надежда на  
спасение нетленное  
С теми, [кто стали] предводителями жизни,  
перводарителями сана,

ԲԱՆ ԶԲ  
Ի ԽՈՐԾ ԱՐՁԵՑ ԽՈՂՔ ԷՐԿԻ ԱՏՏՈՒՅԾՈ

Ա

**Տ**ե՛ր Աստված բարերար, բազմապարզեց  
թագավոր,  
Կենաց պատսպարան, լուսո կերպարան, լայն  
հանգստարան.  
Որ մեղավորիս համար մարմնացար,  
Անպատում գործեր կատարեցիր դու ու շատ  
հրաշքներ,  
Մինչև հասցրիր կատարելության՝  
մարդեղություննդ  
Քո ամենալիր աստվածության հետ:  
Արդ, հանուն երկնաստեղծ ձեռքովդ ձեռնադրված  
եվ քո Սուրբ Հոգով օծված սրբազն  
առաքյալների,-  
Որոնց արժանի գովեստն ես արի մի այլ  
գրվածքում, ըստ կարողությանս,  
Քո փառքի համար, Տե՛ր ամենայնի,-  
ի՞նձ էլ ողորմես, հիշելով սերդդ, որին դու  
նրանց արժանացրիր:  
Նրանցով ելքի շավիդ ցույց տուր ինձ դեպի  
երանությունը փափագելի:  
Նրանց հովվության բարի ձայնը թող քաղցր  
հնչի ինձ, զերթ կենաց ողջույն:  
Անեղծ փրկության հույսի մեջ ե՛ս էլ բաժին  
ունենամ՝  
Կյանքի առաջնորդների հետ,

Сонмами славных, реками жизни,  
 С громогласными благовестователями,  
 властителями знаменитыми,  
 С украшенными венцами лучезарными,  
 С освященными неотъемлемой красой  
 благодати могучей,  
 С исполненным живящего елея света  
 Господнего.

## 2

Вместе с учениками великой заповеди Твоей,  
 О Христос, Бог Всевышний,  
 И мучениками, отличившимися  
 подвижничеством своим,  
 Кои смертной, многому чимой плотью своей,  
 Страждущими и всенемощными своими  
 членами,  
 Земнородным, из праха сотворенным своим  
 существом,  
 Противоборствуя всем сущностям и  
 частицам,  
 Увенчаны были, вознеслись, возродились  
 душой;  
 [Кои] отважно поднялись с земли, как сказал  
 пророк,  
 И [стали] истинными свидетелями  
 многотрудной смерти;  
 Кои даже в мифу смогли ясно узреть  
 Блага несомненные: невещественное,  
 невидимое, тайное;

Պատվի այդ չնորհն առաջին անգամ ստացողների,  
 Փառավորյալ խմբերի,  
 Բանական գետերի,  
 Բարձրածայն ավետողների,  
 Պանծալի իշխանների,  
 Լուսապայծառ թագով պճնվածների,  
 Զորավոր չնորհի անկապուտ զարդով  
     պայծառացածների,  
 Տիրական լույսի զվարթարար յուղով  
     կատարյալների հետ:

## Բ

Եվ արդ, ո՞վ բարձրյալ Քրիստոս Աստված,  
 Մեծ պատվիրանիդ աշակերտների հետ,  
 Հարգելով նրանց աղոթքներն հաճո և  
     ընդունելի,  
 Եվ արյունընծածա, վաստականվեր ու  
     քրտնակնդրուկ  
 Աղերսանքները նահատակությամբ ընտիր  
     ճանաչված մարտիրոսների,  
 Որոնք մահացու և մշտաչարչար մարմնով իրենց,  
 Վտանգավոր և ամենակիր անդամներով,  
 Երկրավոր և հողազանդված բնությամբ  
 Բոլոր նյութեղեն գոյությունների ու տարրերի  
     հետ կոփի մղելով՝  
 Պսակվեցին, բարձրացան և կենդանացան  
     հոգեպես,  
 Եվ արիաբար ենելով երկրից, ըստ մարգարեի,  
 Դարձան ծմարիտ վկաներ ամենափորձ մահվան,

С учениками апостолов и сострадателями их,  
Своими делами, полнотой совершенства  
равными им,  
Кои ныне пафят в хороводе блаженства  
вечного;  
Вместе с мольбами их, угодными и  
приемлемыми,  
И в уважение их трудноуловленных прошений,  
Кои орошены были кровью и потом, что  
ладаном благоухает,  
Прими меня вновь к Себе, утвяди,  
Приобщи с ними к спасению нетленному.

### 3

С теми, кто, омытые кровью, прошли чрез  
огонь и меч,  
И последователями Твоими, о Сын Божий,  
Святыми отшельниками и отцами-  
пустынниками,  
С отвагой неодолимой и воздержанием  
непреклонным  
Сражавшимися храбро с лютой гордыней  
насилия плоти  
(Чем и был изгнан Велиар бесплотный),  
В непрестанной борьбе на ристалище жизни  
мифской,  
Не боясь утомления от тягот ее,  
Влекомые из шифи бурного моря мифа сего  
Легкими душами со склонностью тяжкою тел,  
Достигли они [тихой] пристани жизни.

Եվ աշխարհում իսկ նրանք նկատել  
կարողացան պարզ՝  
իմանալի, անտեսանելի ու ծածուկ,  
Բայց և աներկըս հույսով տեսնվող բարիքներն  
ամեն.  
Նրանք՝ աշակերտ և չարչարակից առաքյալներին,  
իրենց գործերով, կատարյալ լրմամբ նրանց  
հավասար  
Պարում են հիմա իրախճանքներում,  
անսահմանափակ երանության մեջ,-  
Ընդունիր և ի՞նձ, որպեսզի ես Էլ նրանց պես  
ընդմիշտ  
Հաստատվեմ քո մեջ անեղծ փրկությամբ:

### 4

Նրանց հետ, որոնք արյունով ներկված՝ անցան  
կրակի ու սրի միջով՝  
Կան քեզ հետեւող, Որդի՛դ Աստծո, և՝  
սրբակենցաղ հայրեր մենակյաց,  
Որոնք անպարտելի քաջությամբ և անպատիր  
զգաստությամբ  
Արիաբար մարտնչելով դժնյա և գոռող մարմնի  
բռնության դեմ,  
Անմարմին Բելիաբին հալածեցին.  
Եվ աշխարհային կյանքի ասպարիզում,  
մշտամարտ մրցությամբ,  
Առանց ծանրաբեռնվածության  
տաղտկության,  
Լայնածավալ աշխարհի ալեծուփ ծովից

И, как возлюбившие вышиний удел,  
Забывая о том, что позади,  
Они смело возложили на главу себе победы  
венец,  
Украшенный поистине светозарною славой.  
Ради достойных их просъб, священным засступ-  
ничеством их,  
Вместе с ними прими и меня,  
Самого грешного средь осужденных.

#### 4

И днесъ, переплетя нечистые речи мои  
С мольбой величальной упомянутых  
выше блаженных,  
Что славят Тебя,  
Кои обо мне на радость Тебе [вечно] голосят,  
Вместе с ними и я вознесу мольбу,  
Подобно тому как горечь кладут вместе со  
сладким,  
Или как колючее сочетается с гладким,  
Уродство - с красотой,  
Или же тина - с блестящим жемчугом,  
Или же прах - с чистотой золата,  
Или камни простые - с ясным серебром,  
Отрицание - с истиной  
Иль песчинка, попавшая под зуб, -  
С кусками мягкого хлеба.  
Так внемли, Всемогущий, Всесильный,  
Восхваляемый,  
Им ради меня,

Թոցնելով թեթև հոգիներն իրենց մարմնի ծանր  
տապանակով՝  
Նավահանգի՛ստն հասան կյանքի.  
Եվ, որպես վերին վիճակի սիրահարներ, առանց  
հետինների վրա մտածելու,  
Հաղթանակի թագն իրենց գլուխը դրին  
համարձակորեն,  
Պահած իսկապես պայծառու ճոխությամբ:  
Այդ սուրբ հայրերի աղոթքներով արժանավոր և  
խնդրանքներով նվիրական,  
Նրանց հետ՝ քեզ մոտ ընդունիր նաև ինձ՝  
մեղավորիս:

#### Դ

Արդ, վերոհիշյալ երջանիկների փառաբանական  
աղերսների հետ,  
Որոնք ինձ համար են գոչում, բարձրյա՛լ, քեզ ի  
հաճություն,  
Ահա ես էլ իմ անմաքուր խոսքերն եմ խառնում՝  
այնպես,  
Ինչպես քաղցրության հետ տրված դառնություն,  
Կամ փուշ՝ փափկության հետ,  
Տգեղություն՝ վայելչության հետ,  
Տիղմ՝ գեղեցիկ մարգարտի հետ,  
Կամ հող զուտ ոսկու հետ,  
Կամ անարժեք քարեր՝ պայծառ արծաթի հետ,  
Բացասություն ճշմարտության հետ,  
Կամ ատամնառու ավագ՝ հացի փափուկ  
զանգվածի հետ:  
Արդ, լսիր, հզո՞ր, ձեռնհաս, գովյալ,

Мне ради них.  
 Им во хвалу,  
 Мне во спасение,  
 Ради славы Твоей,  
 О Всемилостивый, Благодетельный,  
     Благословенный,  
 Долготерпеливый, Могущественный,  
     Неисповедимый и Неизреченный,  
     Непленный и Несотворенный.  
 [Все] дары и милости - Твои,  
 Ты - начало и причина всех благ.

## 5

Не осуждаешь Ты, но взызволяешь,  
 Не губишь, а обретаешь,  
 Не умерщвляешь, а оживляешь,  
 Не изгоняешь, а собираешь,  
 Не предаешь, а дафуешь жизнь,  
 Не погружаешь, а поднимашь,  
 Не низвергаешь, а ставишь на ноги,  
 Не проклинаешь - благословляешь;  
 Не мстишь, а благо дашишь,  
 Не обездоливаешь, а утешаешь,  
 Не вычекиваешь, а вписываешь,  
 Не колеблешь, а утверждаешь,  
 Не топчешь ногами, а ободряешь;  
 Не измышишь Ты причин смерти,  
 А ищешь способы жизни сохранить,  
 Не стремишься Ты истреблять,  
 Но милосердно спасаешь;

Նրանցը ինձ համար, իմը՝ նրանց,  
 Նրանց ի գովեստ, ինձ ի փրկություն՝  
     քո փառքի համար,  
 Ամենագութ, բարերար, օրհնյալ և երկայնամիտ,  
 Կարող, անքնին, անեղծ, անստեղծ և անճառելի,  
 Քոնն են պարզեներն ու չնորհները,  
 Դու ես սկիզբն ու պատճառը բոլոր  
     բարությունների:

## Ե

Չե՛ս դատապարտիչ, այլ ազատարար.  
 Չե՛ս դու կորուսիչ, այլ գտնող.  
 Չե՛ս մահացուցիչ, այլ ապրեցնող.  
 Չե՛ս տարագրիչ, այլ ժողովող.  
 Չե՛ս մատնիչ, այլ փրկող.  
 Չե՛ս ընկղմիչ, այլ վեր հանող.  
 Չե՛ս գլորիչ, այլ կանգնեցնող.  
 Չե՛ս անիծիչ, այլ օրհնող.  
 Չե՛ս վրիժառու, այլ ներող.  
 Չե՛ս թշվառացիչ, այլ միխթարող.  
 Չե՛ս ջնջում դու, այլ գրում ես.  
 Չե՛ս սասանեցնում, այլ հաստատում.  
 Չե՛ս ոտնահարում, այլ սփոփում.  
 Չե՛ս հորինում դու պատճառներ մահվան, այլ  
     հնարներ ես փնտրում կենաց.  
 Չե՛ս ձգտում սատակեցնելու, այլ փրկելու  
     ողորմածաբարար:  
 Չե՛ս մոռանում այցելությունդ,  
 Չե՛ս լքում բարին.  
 Չե՛ս արգելում գթությունդ.

Не забываешь Ты попечения,  
 Не отступаешься от добра,  
 Не ставишь помех своему состраданию,  
 Не выносишь решения о гибели,  
 Но завещаешь свободу;  
 Не вызываешь к Себе вражды Своей щедростью,  
 И за милости Твои не оклевещут Тебя,  
 За дары Твои Тебя не ругают,  
 Не упрекают Тебя, что одафяешь Ты зря.  
 Не осуждаем Ты за долготерпение,  
 Не хулят Тебя за всепрощение,  
 Не порицают Тебя за добродетель,  
 И не пренебрегаем Ты за мягкость Твою,  
 И за все это не ропот,  
 А хвала немолчна воссыпается Тебе.  
 Отпусти грехи мои, Всемогущий,  
 Разреши от проклятий, Благословленный,  
 Очисти от долгов моих, Милосердный,  
 Уничтожь преступления мои, о Благий,  
 Протяни мне перст попечения -  
 И тотчас совершенным я стану,  
 Что может быть легче этого для Тебя,  
     о Господи,  
 И для меня, грешного, важнее?  
 Так живописуй снова, о Благодетель,  
 Тобою сотворенный образ мой,  
 Вдохни в меня вновь Твою всегочищающую  
     благодать,  
 Дающую свет и возрождающую дыхание,  
 Да бы сберечь мою многогрешную душу.

**Զե՛ս տալիս վճիռ կորսոյան, այլ ազատության  
     կտակ:**  
**Զե՛ս թշնամանվում առատաձեռնությանդ համար,  
     եվ չնորհներիդ համար չես բամբասվում.**  
**Զե՛ս հայհոյվում պարզեներիդ համար,  
     եվ ձրի ընծաներիդ համար չես նախատվում.**  
**Զես անգոսնվում երկայնամտությանդ համար,  
     եվ ներելուդ համար չես պարսավվում.**  
**Զես բանսարկվում բարությանդ համար,  
     եվ քաղցրությանդ համար չես անպատճիւմ.**  
**Զես արհամարհվում հեզությանդ համար:  
     եվ սրանց համար ոչ թե տրտունջներ,**  
**Այլ անլոելի գոհաբանություններ են առաքվում  
     քեզ:**  
**Վերցրու մեղքերս, հզո՞ր.**  
**Լուծիր անեծքներս, օրհնյա՛լ.**  
**Քավիր պարտքերս, ողորմա՛ծ.**  
**Զնջիր հանցանքներս, գթա՛ծ.**  
**Օգնիր ինձ մատովդ, և իսկույն պիտի լինեմ  
     կատարյալ.**  
**Ի՞նչ կա քեզ համար, Տե՛ր իմ, սրանցից ավելի  
     դյուրին,**  
**եվ մեղապարտիս համար ավելի կարեռագույն:**  
**Ուստի քո ստեղծած պատկերիս վրա,  
     ո՛վ բարեխնամ,**  
**Կենդանագրի՛ր դու նորոգող դարձյալ և  
     լուսավորող**  
**Մաքրագործ չնորհիդ փչումն չնչի,  
     Բազմամեղ հոգին իմ պաշտպանելով:**

## 6

*Не ускоряй, о Милосердный, наступление последнего дня,  
Дабы не пришлось мне беззащитным и с руками пустыми  
Следовать по пути нескончаемому,  
В час жажды не дай мне чаши, полной желчи.  
Не отними у меня благодеяния пользы духовной,  
И, подобно нежданному, ужасному нашествию набежников,  
Пусть не грянет ночь моей смерти.  
Жгучая лихорадка в час неприуготовленный  
Пусть не подсчет корни мои и не иссушит их,  
И пусть напасти лунатизма, постигнув меня,  
Не повредят мне тайно;  
Пусть не сохранится во мне лед греха  
И не смоют, не унесут меня стремительные потоки жизни мифской;  
Пусть покой не несет мне с собою смерть  
И забытье не препровождает к уничтожению,  
Пусть сон не станет причиной погибели  
И дрема не вызовет тления;  
Пусть кончина не постигнет меня в час неподобающий  
И душа моя, возносясь,  
Не падет, столкнувшись с препятствием.*

## Ω

*Մի՛ արագացնի, ողորմա՛ծ, կարճ ժամանակում,  
օրս տարածամ,  
Որ չլինի թե անպաշար ու ձեռնունայն ընկնեմ  
ես երկար ու անվերջ ճամփա.  
Մի՛ տար ինձ բաժակ դառնությամբ լեցուն՝  
ծարաված ժամին.  
Մի՛ փակիր իմ դեմ հաջողությունը հոգեոր  
օգտիս,  
Եվ հանկարծադեպ ասպատակների նման  
ահավոր  
Թող չպատահի մահվան գիշերն ինձ.  
Տապը տոթակեզ, անպատրաստ պահին, թող  
չկտրատի արմատներս ու չչորացնի,  
Ոչ էլ լուսնական դիպվածները թող վրաս  
հասնելով գաղտնի վնասեն.  
Թող իմ մեջ մեղքի սառույց չպահվի,  
Ոչ էլ աշխարհիկ կյանքի ուղիերի հոսանքները  
ինձ ողողեն, տանեն,  
Թող որ հանգիստն ինձ մահ չբերի,  
Եվ ոչ էլ նինջը սատակման առաջնորդի.  
Թող քունն ինձ կորսոյան պատճառ չլինի,  
Եվ ոչ էլ նիրհը ապականություն առաջ բերի.  
Թող որ վախճանը անպատեհ ժամի չարշավի  
վրաս,  
Եվ ոչ էլ շունչս վեր բարձրանալիս՝ ցած ընկնի  
ինչ-որ արգելքի առած:*

Ты - Господь, Ты милосердный, Ты  
благодетельный,  
Ты долготерпеливый, Ты всесильный,  
Во всех делах непостижимых Ты неизреченно  
могуч,  
[Ибо можеши] очистить от грехов, спасти,  
животворить,  
Озарить и вновь восставить.  
Ты [возврашаешь] к жизни,  
Вырба из клыков хищного зверя и зубов  
драконов,  
Из глубин бездны выводишь к радости света  
И [спасаешь] утопающего из пучины грехов,  
Дабы со славою посадить рядом с блаженными  
праведниками.  
Каждая душа ждет Тебя с надеждой и  
упованием,  
Нуждаясь в Твоей благодати,  
Как [жители] небесных [селений], так и  
земляне,  
Как те, что пали из-за греха, так и  
восставшие в праведности,  
И господин, и слуга, и госпожа, и служанка.  
В Твоих руках душа всего живущего.  
Вечная слава Тебе вместе с Отцом и Духом  
Святым. Аминь.

Դո՛ւ եսՏեր, դո՛ւ գլուխ, դո՛ւ բարերար,  
Դո՛ւ երկայնամիտ, դո՛ւ ամենակարող,  
Դո՛ւ անձառորեն զորավոր՝  
ամեն անհուսության,  
Քավելու, փրկելու, կենագործելու,  
Լուսավորելու և վերստին ամրացնելու,  
Գաղանների գիշատիչ ժանիքներից կամ  
վիշապների ատամներից ի կյանս կորպելու,  
Խոր անդունդներից բերկրալից լույսին  
բերելու,  
Եվ մեղքի հորձանքներում խեղդվելուց  
ազատելով՝  
Երջանիկ արդարների հետ փառքով  
բազմեցնելու:  
Ամենայն հոգի ակնկալու հույսով քեզ է  
սպասում՝ կարոտ քո շնորհին,  
Թե՛ երկնայինները և թե՛ երկրավորները,  
Թե՛ մեղքով ընկածները և թե՛ արդարությամբ  
ոտքի ելածները,  
Թե՛ տեր, թե՛ ծառա, թե՛ տիրուհի  
և թե՛ աղախին.  
Եվ քո ձեռքումն է բոլորի կենդանական շունչը:  
Եվ քեզ՝ Հոր և Սուրբ Հոգու հետ՝ փա՛ռք  
հավիտյանս. ամեն:

## Глава 81

### Слово к Богу из глубин сердца

1

**В**месте с молениями Богородицы  
 Прими, Милосердный, возносимые ввысь  
 Молитвы и просьбы бессмертных ангелов  
 лучезарных,  
 Кои обо мне в непрестанном попечении  
 Устами святыми немолчно молят.  
 [Ангелы] эти есть [само] добро, Тобой  
 сотворенное, о Благодетель,  
 Непривычные ко злу, созданы они волею Твоей  
 всемогущей,  
 Воинство сильное, подвластное Тебе, о  
 Всевышний,  
 Святые, чистые, непорочны, благословенные,  
 Благолепные, победоносные, непобедимые  
 И быстрые, как полет созерцательных  
 мыслей.  
 Лишившийся плодов куст смоковницы,  
 бесплодной  
 В течение трех лет, что вмещает в себя  
 Извечность времени: прошлое с настоящим и  
 будущее,  
 Долгая праздность, обосновавшаяся в саду  
 мифа сего  
 И украшенная суэтной листвой, лишенной  
 плодов,-  
 Вот это подобие жалкое рода людского.

ԲԱՆ ԶԱ

ՄՐՑԻ ԽՈՐՔԵՐԵՑ ԽՈՂԱՔ ԱԼՏԾՈՒ ՀԵՑ

Ա

**Ա**ստվածածնի մաղթանքների հետ ընդունիր,  
 ե՛կ բարեգութ,  
 ե՛կ աղերսազին խնդրանքներն, ահա, անմահ,  
 լուսակերպ հրեշտակների,  
 Որոնք ինձ համար մաքուր բերանով գոչում են  
 անլուռ  
 Հանապազօրյա բարեխոսությամբ:  
 Բարի են նրանք՝ բարերարիցդ միշտ բարեգործված,  
 եվ ամենիշխան էիդ հրամանով ստեղծված՝  
 հավետ անընդել չարին:  
 Նրանք Բարձրյալիդ զորքերն են հզոր խոսքիդ  
 միշտ պատրաստ.  
 Սուրբ են ու մաքուր, անարատ, օրհնյալ,  
 Վայելուչ, հաղթող և անպարտելի,  
 եվ արագաշարժ՝ մտքի տեսության ընթացքի նման:  
 Բարեխոսներ են նրանք, մատակարար և  
 խնամակալ,-  
 Աշխարհիս այգում արմատավորված  
 եվ երեք երկար ու ձիգ տարիներ դատարկ  
 մնացած,  
 (Որ հավերժական ժամանակն է պարունակում իր  
 մեջ  
 Անցյալը, ներկան ու ապառնին),  
 Այն թզենու, որ պտղազուրկ էր, պաճուծված  
 միայն սին սաղարթներով,

[Ангелы] - посредники и распорядители его,  
Они постоянно витают вокруг нас, сочувствуя  
нам в страданиях наших,  
Ждут сопричастия нашего в благоденствии  
И, вечно живые, молятся [за нас], за наше  
спасение,  
Повторяя слова: «Дело рук твоих ты не остав-  
ляй».

Ибо воистину о нас мольбы их сии, Тобой,  
благодетельный Бог,  
Им внушенные, [просиящие] за нас.  
Ведь словом они Твоим созданы,  
Мы же рукою [Твоей] сотворены.  
И придут они с Тобой, единородным,  
[Как] свидетели Страшного Суда воздаяния  
И правдивые обвинители преступлений наших,  
нас, земнородных,  
И откроют пред Судом грозным право, как  
управляли нами,  
И оттуда вон будут сострадать, увещевая  
воздыханиями,  
И беспрестанно петь [грозным] голосом:  
«Умилосердись и не погуби,  
[ведь их] создал Ты».

## 2

Вместе с восхвалением гласа просиящего  
бессмертных небожителей,  
Вслушайся Ты и в нашу мольбу, о Создатель  
всего!

Որ ճիշտ պատկերն է թշվառ մարդկության:  
Նրանք մեր շուրջը դեգերում են միշտ,  
կարեկցելով մեզ  
եվ ուզում են, որ լինենք բախտավոր.  
Եվ կենդանությամբ հավիտենական աղոթում  
են մեր փրկության համար,  
Այս խոսքն ասելով՝ «Քո ձեռքի դործը մի՛  
անտեսիր դու»:  
Արդարև մերն է այս աղաչանքը,  
Բարերար Աստծուդ կողմից մեզ համար՝ նրանց  
սահմանված.  
Զի նրանք ստեղծված են խոսքով,  
իսկ մենք ձեռքով ենք ստեղծագործված:  
Նրանք հատուցման ահավոր դատաստանին  
գալու են որպես վկաներ՝  
Միաձնիդ հետ ծշմարտաբան դատախազներ  
լինելու երկրայիններիս հանցանքներին,  
եվ ահավորի ատյանի առաջ՝ իրավախնդիր՝  
Հաշվետու պիտի լինեն մեզ համար.  
Թեև այնտեղ էլ մեզ կարեկցելով՝  
Հնչեցնեն պիտի իրենց մշտանվեր երգն  
հառաչաձայն.՝  
«Ողորմիր, ո՛վ Տեր, դո՛ւ ստեղծեցիր, դու մի՛  
կորցնի»:

## 3

Արդ, անմահների գոհաբանության  
խնդրանքների հետ  
Մեր հեծություններն էլ հոտոտիր, արարի՛չ  
ամենայնի,

Ты, что превзошел добром твоей  
 как небородных, так и нас, земных.  
 Ибо властен Ты делать добро как нам, так и  
 им.  
 И ныне, дабы приютив нас к непорочным  
 сим, чудозрачным и бестелесным,  
 Безупречно чистым, невинным, пламеобразным,  
 бесплотным и необоримым,  
 Что одарены вечнонастущим обилием  
 добродетелей  
 И блестящими знаниями неисчерпаемыми,  
 Согреты неубывающим теплом,  
 И [сердца их], горящие врожденным жаром  
     Боголюбия, - [присовокупи]  
 К неразгорающемуся пламени наших хладных  
     сердец,  
 Дай разогреться [им] ярким пламенем  
 На священном алтаре великого таинства,  
 Что в храме Твоем,  
 Чтоб неусыпно и не мешкая ждать повелений  
     Твоих  
 И блаженной животворящей воли Твоей,  
     о Всесоздателю,  
 И херувимскими добродетелями пристать  
     неразлучно к Тебе.  
 [Ангелы] - великая держава Небесная,  
 Воинство чистое, грозное Твое,  
     о Бог в Небесах;  
 Свободно рожденные служители твои,  
 Искры яркие в Твоем облаке Света!

Որքությամբ գերազանցում ես  
     երկնայիններին և երկրայիններիս,  
 Զի դու ես բարերարում թե՛ մեզ և թե՛ նրանց:  
 Եվ արդ, անախտներն այդ ահա,  
 Հրակերպներն հրաշտեսիլ, մաքուրներն անխառն,  
 Անմեղներն ու բոցեղենները, հոգեղեններն ու  
     անհաղթները,  
 Ծնորհիվ իրենց անարատ բարեզարդության,  
 Բարձր ազնվության ամենազարդացած  
     առավելությամբ  
 Եվ գերափայլ ու ճոխ գիտությամբ,  
 Որպես ջերմեռանդ աստվածասիրության  
     ինքնաբուն տապի  
 Անցուրս ջերմությամբ ջեռուցանողներ,  
 իրենց պես և մեր սառը սրտերի անբորբոք  
     չի ջումն են հրահրում հար,  
 Որպեսպի նրանք այրվեն անաղոտ՝  
 Մեծախորհուրդ սուրբ սեղանի վրա՝ այս  
     խորանի մեջ,  
 Առանց նիրհելու և դանդաղելու, սպասելով միշտ  
 Ամենաստեղծիդ կեցուցիչ կամքի երանելի  
     հրամաններին,  
 Աստծուն միացած անբաժանելի՝ քերովքեական  
     առաքինությամբ:  
 Պետություններ են նրանք երկնավոր,  
 Եվ զինվորներ են ահավոր, անբիծ,  
 Երկնավոր Աստծուդ պաշտոնյաներն են  
     ազատազնյա,  
 Հուսեղեն ամպիցդ շողերի ցոլքեր:

## 3

Так и меня, грешного, земнородного,  
Молитвами ангела моего возлюби и помилуй,  
Иисусе,  
Обрати меня, Господи, к добру, к светлому  
следу Твоему,  
Дабы завет заступничества души моей,  
Кой доверил Ты надзиранию его,  
И [тот] принял от Тебя в жизни сей, [чтоб]  
С ликующим сердцем, радуясь за меня,  
Необвиненный, благословляемый Тобой,  
С веселым лицом, с наслаждением  
Тебе, Небесный Царь, Слава недоступная,  
На праздник бдящих сил, в хороводе веселом,  
Поднеся, подафить, благословленный  
и милосердный,  
И Тебе, неисповедимому, вместе с Отцом  
недосягаемым  
И с участием Духа неизреченного  
Подобают слава, честь, поклонение  
Во веки веков.  
Аминь!



## 4

Ուստի հողեղեն մեղավորիս էլ մարդասիրաբար  
ողորմիր, Հիսո՛ւս,  
Աղաչանքներովն իմ հրեշտակի, դարձնելով ինձ,  
Տեղի քո բարի, լուսավոր ճամփան,  
Որպեսզի հոգուս ավանդը, որի պաշտպանությունը  
նրա տեսչությանը վստահացար,  
Որը նա քեզնից ընդունեց այստեղ, այս  
աշխարհում դեռ,  
Ինձնով բերկրալից և ուրախ սրտով,  
քեզնից օրհնված,  
Անմեղադրելի, խնդալից գեմքով ու կենսազգարթ՝  
Քեզ՝ անհաս փառքով բարձր արքայիդ,  
Հավերժ կենդանի հրեշտակներիդ ամենառախ  
խրախճանքներում  
Ընծայաբերի, գովյա՛լ ողորմած:  
Քեզ՝ անքննելուդ, Հոր և Հոգու հետ անհաս և  
անձառ  
Վայելում են փառք, պատիվ, երկրպագություն  
Հավիտյանս. ամեն:



## Глава 2 Слово к Богу из глубин сердца

### 1

**К**оли Ты устами плотскими молишь Бога Всевышнего,  
Который умилостивляется лишь делами добрыми,  
Но не словами витийственными прельщается,  
Ты, чье сердце постоянно обращено к Египту,  
Какой же пример подходящий и сходный с Тобой  
Привести мне здесь, о душа моя грешная!  
Я - соучастник Содома разрушенного,  
Я - изобличенный судья Ниневии,  
Я - барабан более слабодушный,  
Чем царица южная,  
Я хуже, чем Ханаан,  
Я непокорнее, чем Амалек,  
Я - неисцелимый город идолов,  
Я - след мятежа древнего Израиля,  
Память, сохранившаяся о предательстве Иудеи.  
Я укоряю боле, чем Тир,  
Я отвержен боле, чем Сидон,  
Я своеенравен боле, чем Галилея,  
Я менее достоин прощения, чем неуверовавший Капернаум,  
Я осуждаю боле, чем Хоразин,  
Я порицаю вместе с Вифсаидой,  
Я - бесстыдные седины Ефрема,

ԲԱՐ

ԱՐՁԻ ԽՈՐՔԵՐԵՑ ԽՈՂԱՔ ԱԱԾՈՒ ՀԵՑ

### Ա

**Ք**անզի մարմնավոր չուրթերով, ահա,  
Պուղերձ ես կարդում բարձրյալ Աստծուն,  
Որ գործերով է գրավում միայն և չի կաշառվում  
բանաստեղծությամբ,  
Եվ քո սրտի մեջ նայում ես դու միշտ դեպի  
եղիպտոս,  
Համապատասխան քեզ ի՞նչ օրինակ դնեմ ես  
այստեղ, անձ իմ հանցավոր:  
Պատժակից եմ ես քանդված Սողոմին,  
Պապանձված դատախազն եմ Նինվեի,  
Սոսկալի բարբարոս ավելի, քան տիկինն  
հարավյան,  
Քանանից վատթար ավելի և Ամաղեկից համառ,  
Կուռքերի քաղաք անբժշկելի,  
Հին հսրայելի ապստամբության մնացած բեկոր,  
Հիշատակարան պահված՝  
Հուղայի ուխտազանցության:  
Կշտամբված եմ ես ավելի, քան Ծուրը  
Եվ Ծայդանից ավելի տարամերժված,  
Խորթաբարո ավելի, քան Գալիլիան,  
Եվ քան անհավատ Կափառնայումն աններելի.  
Պարսավված եմ ես, ինչպես Քորագինը և  
Բեթսայիլայի հետ բամբասված.  
Անպարկեցության մեջ սպիտակած  
մագերն եմ եփրեմի.

Աղոթք բարի վախճանի

Я - голубь ласковый, но всегда по глупости,  
 А не по кротости осознанной,  
 Потомок львов, а по сути змея коварная,  
 Словно яйцо аспида, наполнен я [горькой]  
     желчью,  
 Я - символ последних ударов, постигших  
     Иерусалим,  
 Согласно слову Божьему и гласу свидетелей.  
 Скиния моя отвергнута и близка к погибели,  
 Замки дверей моих сломаны, и вновь замарано  
 Одаренное способностью говорить строение  
     моё.  
 Я покинул благопристойное наследие свое,  
 Позабыл дом, созиженный Богом,  
 Согласно речениям прежде писавших Моисея,  
     Давида и Иеремии.  
 Мое изъязвленное проказой [грехов] прибежище  
     разума,  
 Оскобленное ударами увещаний,  
 Оздоровленное законом [евангельским],  
 Обмазанное глиной смиренной покорности,  
 Все же не сумело исцелиться  
 И вновь было разрушено рукой строителя;  
 И как возмездие справедливое, по велению  
     всемогущего,  
 [Обломки] его были вынесены “на место  
     нечистое”,  
 Отринуты, отчуждены без всякой жалости  
     великой преградой.  
 Я денюги свои зарыл в землю грехами,

Աղավնու նման մեղմ եմ ես՝ հիմարությամբ  
     և ո՛չ հեղությամբ.  
 Օձ եմ ես բանավոր եղեռնական՝ առյուծի  
     կորյուններից ծնված.  
 Ժանտությամբ լցված քարքի ձվերի  
     կերպարանքն ունեմ,  
 Պատկերն եմ ես երուսաղեմի վերջին  
     հարգածների,  
 Ըստ գուշակության տեսանողների և  
     տերունական խոսքի համաձայն:  
 Կործանման հասած մերժված տաղավար եմ ես,  
 Կրկնակի ներկված շինվածք եմ խոսուն՝  
 Խորտակված գուան ջարդված փականքով:  
 Ժառանգություն եմ վայելուչ թեև, սակայն և  
     թողնված,  
 Մոռացված տուն եմ աստվածակերտ,  
 Ինչպես ասել են Մովսեսը,  
 Դավիթն ու Եղիմիան:  
 Բորբոտությամբ վարակված բանական  
     մի տուն եմ ես՝  
 Ապաշխարության խրատին ենթարկված,  
 Օրենքով նորոգված և ծեփված կավով՝  
     ողոք հեղության,  
 Բայց ճարահատված այլևս բուժման մի ելք  
     գտնելուց՝  
 Շինողի ձեռքով կրկին քանդված,  
 Եվ հրամանով Հզորի, իբրև արդար հատուցում,  
 Դուրս նետված անսուրբ մի վայր՝ անխնա,  
 Հեռու վտարված և տարագրված:

Подобно потерявшему залог [рабу] неправедному,  
Как показано это в Евангелии.

2

Но Ты, о Боже, Боже духов и всякой плоти,  
Согласно исповеданию Богоблагодатного, -  
Долготерпеливый и многомилостивый, -  
Согласно слову Ионы святого,  
Даруй мне [возможность] завершишь,  
Во урождение благословенной воле Твоей,  
Начатую [мной] молитвенную книгу сих  
песнопений скорбных.  
И, засевая слезами слов моих ступени  
предстоящего мне пути  
В уготованные [Тобою] чертоги [бесспорочные],  
[Да] подоспею я к окончанию сбора урожая  
[И да] вернусь с радостью полного очищения  
от грехов -  
Сим блаженным плодом из спона [Твоей]  
благостины.  
Не дай мне, [Всемилостивый], чрева сердца  
бесплодного, как Израилю,  
И иссякнувших слезников очей,  
Услышь, о могучий и милосердный, меня -  
одаренного разумом молящегося,  
Прежде, чем услышит небо, а небо [услышит]  
землю,  
А [земля услышит] хлеб, и вино, и елей,  
А сии [услышат] Изреель,  
Ибо мольбы небожителей, что при Тебе,

Հողի տակ թաղված դրամն եմ անպետ՝  
Ավետարանի ավանդակորույս ուրացողի  
քանքարի նման:

¶

Սակայն դու, ո՞վ Աստված,  
Աստված՝ հոգիների բոլոր ու մարմինների,  
Աստվածաշնորհ Մովսեսի դավանությամբ,  
Եվ ըստ ձայնի երկայնամիտ ու բազումողորմ  
սուրբ Հովնանի,-  
Տուր ինձ ուժ, որպեսզի քո օրհնյալ կամքին ի  
հաճություն՝  
Կարողանամ ավարտել աղոթամատյանն այս  
ողբերգական,  
Որ սկսել եմ ես ահավասիկ:  
Եվ մինչ արցունքով եմ սերմանում խոսքերս  
Մեզ համար պատրաստված օթևաններդ տանող  
ձանապարհի վրա ոտք դրած պահին այս իմ,  
Թող որ, երբ հասնեմ հունձքն հավաքելուն՝  
Դառնամ բերկըալից ու երջանիկ և լիովին  
քավված  
Բարի օրանների երանական արդյունքով:  
Մի՛ տար ինձ սրտի արգանդ անորդի՝  
հսրայելի պես,  
Եվ ոչ էլ ցամքած ստիճներ աչքի, ո՞վ  
ամենագութ:  
Լսի՛ր բանական աղաչափորիս, հզո՛ր ողորմած,  
Նախքան երկնքին, երկինքը՝ երկրին, երկիրը՝  
գինուն, ցորենին, ձեթին,

Целительнее влияют на мою душу,  
 Нежели на стихии губительные.  
 Ты - Творец, а я - глина,  
 Окажи мне, колеблющемуся,  
 По окончании молитвенных этих стенаний  
 Благоволение окрепнуть здесь,  
 Дабы, когда развернется небеса вышине,  
 Не оказался я неприводен обладать светом  
     [небесным],  
 Подобно воску свечи, что тает [от огня],  
 Обращается в ничто.  
 Моя душа - [душа] нищего, как молитвенно  
     вопиет певец,  
 И моя сила - [сила] изнемогшего,  
 И моя жизнь снедаема угрызениями совести, -  
 Но не трудом перенесенных тягот  
     моля я Тебя:  
 Прими в залог мои молитвы  
 И подай милостыню Твоего прощения,  
 Прими малое от меня, слабого,  
 И подари великое от Себя - Могущественного,  
 Укрепи мое слово раскаяния,  
 Ниспослав и вложив в него дух заповедей  
     Богодухновенных,  
 Да руй мне, о благодетель, свет истины  
     притчи Исаии,  
 Поднеся мне, достойному смерти,  
 Вместо презренного гласа моего естества из  
     меди  
 Злато Твоей благодати,

Եվս սրանք բոլորն էլ հարայելին՝ ի՞նձ լսիր.  
 Երկնավորների աղերսը առ քեզ՝  
 Թող ազդի հոգուս, քան թե տարրերին  
     ապականացու:  
 Ստեղծիչ ես դու, և ես ինքս՝ կավ.  
 Հեծեծագին այս աղոթքներիս նախամուտքում.  
 Հայտնի՛ր, դժառատ, քաղցր կամքըդ ինձ՝  
     տարակուսյալիս,  
 Որպեսզի այստեղ, երկրի վրա իսկ զորանամ ես,  
 Եվ երբ որ բացվի երկինքը վերին,  
 Զլինի՛ որ ես լույսը վայելելու անվարժ, անընտել՝  
 Մոմի պես հալվեմ, սպառվեմ իսպառ, ջնջվեմ  
     մեջտեղից:  
 Միրտ տուր զրկվածիս, ինչպես ասողն է գոչել  
     աղոթքով,-  
 Ուժ՝ թալկացածիս և կյանք մաշվածիս խղճի  
     խայթերից,  
 Եվ ո՛չ անձկությամբ ու չարչարանքով քեզ  
     որոնելուց:  
 Ա՛ռ մաղթանքներիս ավանդն այս և տուր  
     ողորմությունը քո չնորհների:  
 Հնդունիր դու այս փոքրը տկարիցս և չնորհիր  
     մեծը հզորիդ կողմից:  
 Զղջումիս խոսքերն արա՛ զորավոր, մեզ  
     ուղարկելով Հոգիդ բարձունքից,  
 Պատգամներով այն աստվածաշունչ, որոնք դրել  
     եմ ես այս գրքիս մեջ:  
 Հաճի՛ր, բարերա՛ր, լուսավորելով  
     հշմարտապատում առակն եսայու,

Вместо непривлекательного черного железа моей  
[пороночности]  
Знак добродетели - сверкающую огненно-  
красную медь Ливана.

### 3

Почему столь ожесточаешь мое сердце -  
[сердце] ничтожного,  
Что не боюсь я Тебя, о Неисповедимый  
и Страшный?  
Да не останусь я бесплодным в малых трудах  
своих,  
Подобно беспечному сеятелю на неплодоносной  
земле!  
Да не доведется мне страдать от мук родовых  
и не родить,  
Скорбеть и не прослезиться,  
Размышлять и не вздыхать,  
Затуманяться и не пролиться дождем,  
Идти вперед и не достичь,  
Мне призываешь и Тебе не слышать,  
Простить с покорностью и оставаться без внимания,  
Стонать и не сострадать,  
Молить и ничего не получить,  
Принести жертву, но не сжигать ее,  
Увидеть Тебя и уйти с пустыми руками.  
Услышь меня прежде, чем я обращусь  
К Тебе, единственно могущему, за помощью.  
Не воздай мне, злотворицу, карой вечных мук  
По числу дней моих прегрешений.

Մատուցելու ինձ՝ մահվան արժանուս  
Գոյությանս անարգածայն պղնձի փոխարեն՝  
չնորհիդ ոսկին՝  
Անզարդ, սևաթույր երկաթի տեղակ՝ հրաշեկ  
պղինձը Լիբանանի,  
Որ օրինակ է առաքինության:

### 4

Ինչու կարծրացնես սիրտը եղկելուս, անձա՛ռ  
ահավոր,  
Որ չթափանցի երկյուղը այնտեղ:  
Թող որ չլինեմ ես անպտուղ՝  
փոքր այս վաստակիս մեջ՝  
Անբերի հողում, իզուր, ապարդյուն  
սերմանողի պես:  
Չլինի, որ երկնեմ ես, և չծնեմ,  
Ողբամ՝ և չարտասվեմ, խորհեմ՝ և չհառաչեմ,  
Ամպեմ, և չանձրեեմ, ընթանամ՝ և չհասնեմ,  
Ես ձայն տամ, և դու չլսես, պաղատեմ՝ և անտես  
մնամ,  
Կողկողեմ՝ և ինձ չողորմես, աղաչեմ՝  
բայց ոչինչ շահեմ,  
Չոհ մատուցեմ, և չմիսամ,  
Տեսնեմ քեզ՝ և դատարկ դուրս գամ:  
Դեռ քեզ չդիմած՝ լաիր ձայնս դու,  
ո՛վ միայն հզոր:  
Մեղքերով ապրած օրերիս չափով  
Տանջանքի տուգանք վճարել մի՛ տա ինձ՝  
չարագործիս:

Оживи меня, Сочувствующий,  
Услышь меня, Милосердный,  
Окажи сострадание, о Благий,  
Пощади, о Долготерпеливый,  
Защищи, о Прибежище,  
Облагодетельствуй, о Крепкий,  
Освободи, о Вседержитель,  
Дай жизнь, о Возрождающий,  
Подними меня, о Страшный,  
Просвети [меня], о Небесный,  
Исцели, о Все умеющий,  
Очисти от грехов, о Неизреченный,  
Награди [меня], о Щедрый,  
Укрась милостями, о Независтный,  
Примири, о Неведающий пороков,  
Прими, о Немстительный,  
Очисти от долгов, о Благословенный;  
Коли, устремив взор мой [в будущее],  
Я увижу предуготованные мне в день смерти  
две опасности,  
Взгляд Твой будет спасением, о Упование и  
Зашитник.  
Коли, взглянув ввысь, я увижу ужасный путь,  
На кое уловляются [души] всех [умерших],  
Пусть встретится мне на нем с лаской Твой  
ангел миный,  
Яви мне, о Господи, в день, когда испущу я  
последний свой вздох,

Փրկի՛ր ինձ, գթած, լսիր, ողորմած,  
Մարդասիրաբար ներիր ինձ, ներող,  
Խնայիր, երկայնամիտ, պաշտպանիր, ապավեն,  
Բարերարիր, հզոր, ազատիր, ամենակալ,  
Կյանք տուր, նորոգող, վերականգնիր, ահավո՛ր,  
Լուսափորիր, երկնային, բժշկի՛ր, ձեռնահաս,  
քավի՛ր, անքնին,  
Պարգևատրիր, առատաձեռն, չնորհազարդիր,  
աննախանձ,  
Հաշտվիր, անախտակիր, ընդունիր, անոխակալ,  
Ձնջիր պարտքերս, օրհնյա՛լ:  
Երբ հասնի վերջին օրս թշվառ,  
Եվ ես հառեմ աչքերս՝ տեսնելու վտանգները  
կրկնակի,  
Քո փրկությո՛ւնը տեսնեմ թող, հո՛ւյս  
և խնամակալ:  
Եվ երբ ուշագիր նայեմ դեպի վեր՝ ամենագրավ  
ճամփին սոսկալի,  
Խաղաղության հրեշտակդ թո՛ղ քաղցրությամբ  
հանդիպի ինձ:  
Երբ վերջին օրը իմ շունչը փչեմ, ցույց տուր ինձ  
գոււ, Տե՛ր,  
Երկնափորներից եկած երջանիկ, մաքուր մի ողի,  
Որ լուսաթոփիչ՝ ի՞նձ համնի՝ սիրուդ պարգեր առած:  
Հասցրու ինձ նույնպես կարեկից մի՝ մեռած  
արդարներից.  
Հուսահատ օրս դու չարագործիս քո անակնկալ  
բարին պարգևիր:

Летящую в свете чистую душу [кого-нибудь]  
из небесных угодников Божих,  
Которая подоспеет с дафом любви Твоей.  
Быть может, в сопутники мне пришлешь  
Одного из праведников Своих совершенных,  
Даруяше мне, нечестивому, в день отчаяния  
незданную милость?  
Да не допустишь Ты, о Благословенный,  
Ты - Спасение всех,  
Дать зверя жестокого в проводники Твоей  
паршивой овце.  
Для меня, умершего в грехах, Ты - жизнь  
беспорочная,  
Для меня, погрязшего в долгах, Ты - спасение.

### 5

Можешь ли Ты забыть благодеяние, о души  
моей оплом,  
Пренебречь милосердием, о Попечитель,  
Изменить человеколюбию, о Неизменный,  
Отказать в возрождении, о Нескончаемый,  
Отречься от милосердия, о Плод блаженний?  
[Можешь ли] дать уянуть прелестному  
цветку благоволения Своего;  
Опорочить благородную суть Твоего  
могущества,  
Преобразить славу волос Твоего величия,  
Не сохранив прекрасного украшения - сияющего  
Твоего венца?  
Если милосердие - это блаженство,

Քա՛վ լիցի, թե դու, ո՞վ բարեբանյալ, որ  
փրկությունն ես բոլորի,  
Հիվանդ ոչխարիս դժնդակ գազան  
տաս ուղեկից.  
Պարգևիր վերին կյանք անապական՝ մեղքով  
մեռածիս,  
Եվ փրկություն՝ պարտքերի տակ կործանվածիս:

### Ե

Միթե՝ պիտի մոռանաս բարերարելդ, ո՞վ  
ակնկալություն.  
Պիտի անտեսե՞ս գթասիրելդ, ո՞վ խնամող.  
Պիտի փոփոխե՞ս մարգասիրելդ, ո՞վ անփոփոխ.  
Պիտի նահանջե՞ս կենսագործելուցդ,  
անվախճա՞ն.  
Պիտի թողնե՞ս ողորմությունդ, երջանի՛կ պտուղ.  
Պիտի աղավաղե՞ս բարեշնորհ ծաղիկը քո  
քաղցրության.  
Պիտի անպատճե՞ս նյութը պանծալի քո  
հարստության.  
Պիտի պակասեցնե՞ս փառքը վարսերի քո  
բարձրապանծ,  
Պիտի չպահե՞ս պսակիդ պայծառ զարդը  
վայելուչ:  
Եթե ողորմածներին է երանությունը,  
Եվ դու, որ համակ արքայություն ես սիրով լիուլի,  
Միթե՝ չպիտի պարգևես դու քո փրկությունն  
ամբողջ.  
Դեղ չդնե՞ս պիտի իմ վերքերին

А Ты - это царство, полное жажды  
 [милосердия],  
 Ужель не всем даёшь спасение,  
 Не предложишь бальзама для [исцеления] ран,  
 Не зарубиуешь язвы, не окажешь  
     помощи мне - слабому,  
 Не возжешь света во тьме для меня,  
     утопающего на могущество Твое,  
 О дающий жизнь вселенной?  
 Один лишь Ты обладаешь славой по своему  
     естественному и нескончаемо вечен,  
 Что признано всеми, о трижды благословенный  
     и приснохвалимый  
 Далее ведомых пределов вечности.  
 Аминь!



Եվսպեղանի՝ խոցվածներիս և տկարությանս՝  
     դարման չպիտի՝ տանես,  
 Պիտի չծագե՞ս լույս՝ խավարի մեջ՝  
 ինձ, որ զորությանդ վրա եմ միայն իմ հույսը  
     դրել,  
 Տիեզերակա՞ն դու կենսապարգև:  
 Դու միայն ունես փառք իսկ ի բնե,  
     մշտնշենապես,  
 Եվսպարածներն համայն առհավետ  
     վկայում են այդ:  
 Օրհնված ես դու և փառավորված  
     հավիտենության մեջ եռապատիկ  
 Եվս իմանալի հավիտյանների սահմանից էլ վեր՝  
 Միշտ ու միշտ. ամեն:



## Глава 3

### Слово к Богу из глубин сердца

1

**Г**осподи, Господи мой, податель щедрот,  
Благий по естеству, равно властующий  
над всеми,  
Единственный Творец всего из ничего,  
Просториящий, неисповедимый, страшный,  
удивительный,  
Ужасный, могучий, суровый, непонятный,  
Недоступный, непостижимый, непознаваемый,  
Неизреченный, незримый, невидимый,  
неосязаемый,  
Неуловимый, безначальный, предвечный.  
Ничем не затуманенное знание,  
Видение, не ведающее колебаний,  
Истинное естеством Своим,  
Высокое [пребыванием в Небесах]  
И низкое [пребыванием в преисподней],  
Восхваляемое бытие,  
Рассвет без тени, сверкающий луч,  
Свет исповедуемый, упование без сомнений,  
Покой нерушимый, печать неизменная,  
Прозрение, не знающее границ, имя признанное,  
Вкус сладостный, чаша радости,  
Хлеб, укрепляющий души, любовь неиссякающая,  
Обещание, не вызывающее сомнений,  
Покров желанный, обложение неотъемлемое,  
Риза вожделенная, украшение славы,

ԲԱՆ Գ

ԱՐՁԻ ԽՈՐՔԵՐԵՑ ԽՈՂԱՔ ԱԼՏՈՒ ՀԵՅ

Ա

**Տ**ե՛ր իմ, Տե՛ր պարգևատու, ինքնաբռուն բարի,  
Բոլորին տիրող հավասարապես, միայն  
արարիչ դու ամեն ինչի.  
Փառավորյալ անքնին, ահեղ ահարկու, սոսկալի  
հզոր,  
Անպարագրելի, անմերձենալի, անըմբռնելի,  
անիմանալի,  
Անճառելի, անտեսանելի, անզննելի,  
անշոշափելի, անորոնելի,  
Անսկիզբ և անժամանակ, անշամանդադ  
գիտություն,  
Համարձակ տեսողություն, ճշմարիտ  
էականություն,  
Բարձր և խոնարհ, օրհնաբանված գոյություն.  
Անստվեր ծագում, ամենափայլ ճառագայթ,  
խոստովանված լույս,  
Անտարակույս վատահություն, կատարյալ  
հանգիստ,  
Անհեղելի կնիք, անսահման պատկեր, վկայված  
անուն,  
Ճաշակ քաղցրության, բաժակ բերկության,  
Հաց՝ հոգին հաստող, սեր՝ մթանն օտար,  
աներկբա խոստում,  
Ծածկությանկալի, զգեստ անկապուտ, օթոց  
բաղձալի,

Вспомоществование великое,  
 Прибежище восхваляемое, неиссякаемая  
     благодать,  
 Неубывающее сокровище, нетленный дождь,  
 Роза предрассветная, елей, изливающийся на всех,  
 Безвозд滋ное врачевание,  
 Двукратно даюванное здоровье,  
 Величайшее ободрение, необманный призыв,  
 Благовестование всеобщее, Царь, почитающий  
     рабов,  
 Нищелюбивый защитник, вечно богатый  
     дафитель,  
 Шествие беспрепятственное, нерушимое  
     повеление,  
 Вечная надежда, долговидящий [взгляд],  
 Даф без сожаления, всем раздающая десницу,  
 Рука правосудная, око беспристрастное,  
 Глас надежды, весть утешения,  
 Послание радости, имя, жизнь [означающее],  
 Перст попечительный, исход безошибочный,  
 Пророчество непогрешимое,  
     воля животворящая,  
 Нелукавый совет, почесть, не вызывающая  
     зависти,  
 Изобретательность бескрайняя,  
 [Но и] строгий предел,  
 Ненаходимый след, невидимая стезя,  
 Образ неизмеряемый, количество беспредельное,  
 Изображение бесподобное, сострадание  
     несправнное,

Զարդ վայելչական, մեծազոր պաշտպան, գովզած  
     ապավեն,  
 Անփաղելի շնորհ, անպակասելի գանձ,  
 Անապական անձրև, արփիացնցուղ ցող,  
 Ամենաբույժ գեղ, ձրի բժշկություն, կրկնածիր  
     առողջություն,  
 Վեհագույն խրախույս, անպատիր կոչում,  
     հանուր ավետիս,  
 Ստրկամեծար թագավոր, աղքատասեր պաշտ-  
     պան, մշտահարուստ տվող,  
 Անխափան ընթացք, աննահանջ հրաման,  
 Անհամառուս հույս, երկար տեսողություն,  
     տուրք անդղական,  
 Ամենաբաշխ աջ, արդարակշիռ ձեռք, անսաշառաչք,  
 Մխիթարիչ ձայն, սփոփարար լուր, բերկրության  
     բերումն,  
 Անուն կենդանի, նախախնամող մատ,  
 Անմոլար ճամփա, անխարդախ ընթացք,  
     կենդանարար կամք,  
 Աննենգելի խրատ, աննախանձ պատիկ,  
     լյանարձակ հնարք,  
 Անձկական պայման, անգտնելի հետք,  
     աներեւույթ շավիղ,  
 Անչափագիր պատկեր, քանակություն անսահման,  
 Աննմանական տիպ, անզուգական գութ,  
     ողորմություն բազմագեղ,  
 Խոնարհություն տոնելի, համբույր փրկարար,  
 Կա՛ն դեռ շատ ուրիշ խոսքեր ավելի վեհ ու  
     վայելուչ

Благость многообильная, смиление  
торжественное,  
Поцелуй спасительный.  
И еще много других благолепных слов  
Кроме этих можно Тебе посвятить, о Боже,  
Благословенный и восхваляемый,  
Величаемый и проповедуемый,  
Благовестуемый и превозносимый,  
Возглашаемый и повествуемый.  
О ты, чья воля не знает ошибок, исполняя  
наши мольбы.  
Потоки благости, излитые Тобою на нас,  
Я разъясню в дальнейших моих речах,  
Кои побудят Тебя, о Блаженство,  
Возрадоваться моему спасению,  
Как если бы Ты взялкал вкусить неких  
сладостных яств,  
Но не потому, что суетным гласом моим  
Обретешь Ты [новую] славу,  
А потому, что малую молитву мою  
Сделаешь причиной спасения великого.

## 2

Эта заповедь новая - книга скорбных песнопений  
Сочинена для живущих на земле [людей]  
всех возрастов,  
